

lx-44

1129













H. Prunfft Land

20/2 prunfft Land

H. Prunfft

57. 3/12. 874

Հրատարակուածին Ա. Յովհաննիսեան:  
Ա.




ՂԱԶԱՐՈՍԻ ԱՂԱՅԵԱՆՑ

ՀԱՅԿԱՍՏԱՆ ՀՆՁԻԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(յուժուժն տարակուշութեանց)

Պօլսոյ Հայերին նուէր հեղինակից



Տ Փ Խ Ի Ս

1874

1129-ա

Ի Հայրապետութեան

Տ. Տ. ԳԵՈՐԳԱՅ Դ.

Կաթողիկոսի ամենայն Հայոց ծայրագոյն  
Պատրիարքի Համազգական Նախամեծար Ա.  
Թուոյ Արարատեան Առաքելական Մայր Ե-  
կեղեցւոյ Արքայն Կաթողիկէ Էջմիածնի:



863-2013

Дозволено Цензурою Тифлисъ. 8-го Октября 1874 года.



## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԻՄ ՔՆՆԱԳԱՏՆԵՐԻՆ:

Մեզանում ինքնուրոյնաբար գրուածք հազարից մի անգամ հազիւ է երեւում, բայց միեւնոյն մտքի կրկնողները խիստ շատերն են հանդիսանում: Մտքի նորութիւնը կամ ինքնուրոյնութիւնը մի արժանաւոր բան չէ, եթէ նա միեւնոյն ժամանակ ճշմարիտ չէ եւ օգտաւէտ, վասն զի լաւ է մի հին ճշմարտութիւն յայտնել, քան թէ մի նոր սուտ: Նոր միտք է պարունակուում արդեօք այս տեսարկը թէ հին, վնասակար թէ օգտակար բովանդակութիւն ունի, ստութիւն թէ ճշմարտութիւն է արտայայտուած սորա մէջ,—այս հարցերի լուծումը իմ քննադատներին կընկնի. իսկ ես, յայտնի բան է, իմ գործս չեմ փանիլ, ոչ ոք իրա թանին թծու չի ասիւ: Ես միայն այսքան կարող եմ ասել, որ ինչպէս էլ վնի սա արժանի է ամեն ուսումնասէր մարդու ուշադրութեան, վասն զի, ի վնաս թէ յօգուտ հեղինակին ասեմ, նիւթն ինքը վսեմ է, բարձր է եւ մեր ժամանակակից կարեւորագոյն խնդիրներից մինն է. եւ այդ իսկ պատճառով արժանի է անաչառ քննադատութեան, որի վնին եմ ենթարկում ահա իմ նկատմանցս եւ մտածմանցս արդիւնքի մի համառօտ քաղուածքը: Քննելի նիւթս բաժանել եմ երկու մասն. առաջին մասնի մէջ ասել եմ, ինչ որ պէտք էր ասել, եւ դորանով, ըստ իմ կարծեաց, լուծել ենթակայ խնդիրը: Երկրորդ մասնի մէջ՝ մի ընդհանուր հայեացքով փարատել եմ ոմանց տարակուսութիւնը եւ ցրել այս եւ այն անձանց մոլոր կարծիքներն ու առաջարկութիւնը:





ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՁԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Երկուսն տարակուսուքեանց)

Պօլսոյ Հայերին նուիրում է Հեղինակը:





# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

---

---

## Ա.

Յայտնի է, որ մենք Տփլիսեցիքս և մեր համարիւն եղբարք Պօլսեցիք միակերպ չենք հնչում հետեեալ տառերը՝

բ, գ, դ, ծ, կ, ճ, ճ, պ, ջ, տ,

Այս տառերը միմեանցից մտաւոր հնչիւն ունենալով, ասվում են նմանանչիւն, բայց ոչ նոյնանչիւն: Նմանահնչիւն տառերի տեսակը հինգ է, իւրաքանչիւր տեսակ՝ ունի երեք տառ, դորա են—

բ, պ, փ,

գ, կ, ք,

դ, տ, թ,

ճ, ծ, ց,

ջ, ճ, չ,

Իւրաքանչիւր տեսակի վերջին տառը, այն է փ, ք, թ, ց, չ, թէ մենք և թէ Պօլսեցիք միակերպ ենք հնչում, ուրիմն միմեանց նման չենք հնչում միայն այն

տառերը , որոնք սկզբումը յիշեցի: Այժմ մեզ հարկա-  
ւոր է քննել և իմանալ թէ—

ա) Ի՞նչ տարբերութիւն կայ մեր և նոցա հնչե-  
լու մէջ.

բ) Ո՞վ է մեզանից աւելի ուղիղ հնչում , մե՞նք  
թէ նոքա.

գ) Ի՞նչ է դորա պատճառը.

դ) Սխալ հնչողը ի՞նչպէս պիտի կարողանայ զոնէ  
ուղիղ դրել, որպէս զին մեր գրականութեան մէջ երկու  
տեսակ ուղղագրութիւն յառաջ չը դայ , որ պատիւ չի  
բերլլ մեր ազգին և լեզուին:

Բ.

Ի՞նչ տարբերութիւն կայ մեր և Պօլսեցոց հնչման մէջ\*

Գրենք մի քանի բառ և տեսնենք ո՞վ ինչպէս է  
կարդում.

1, ծառ, ճառ, տառ, կալ, պաս,

2, ճառ, ջառ, դառ, դալ, բաս,

3, ցառ, չառ, թառ, քալ, փաս,

Առաջին տողը Պօլսեցիք այնպէս են կարդում, ինչ-  
պէս Տփլիսեցիքս կը կարդանք երկրորդ տողը:

Երկրորդ տողը Պօլսեցիք այնպէս են կարդում, ինչ-  
պէս մենք երրորդ տողը:

---

\* Աթէ Պօլսոյ լեզուասէր ուսուցիչք և ուսանողք կը ցանկա-  
նան օգուտ քաղել այս դրուածքից, նոցա հարկաւոր է կարդալ  
սորան մեր հնչմունքն ունեցող մարդու օգնութեամբ, եթէ ոչ, իմ  
ցոյց տուած տարբերութեանց մասին նոքա չեն կարող մի վա-  
կատար հասկացողութիւն կազմել:



Երրորդ տողը թէ մէնք և թէ նոքա միակերպ ենք  
կարգում:

Ասածս կարող եմ հետևեալ համառօտ ձևի մէջ  
գնել: Պօլսեցոյ հնչմամբ ծ գառել է ծ, ձ գառել է զ, ց  
մնացել է ց:

Ուրեմն ձ տառի հնչունը կորել է, ձ տառի հնչունը  
կայ, բայց իւր դրի վերայ չէ, այլ ձ գրի վերայ, իսկ ձ գիրը,  
որ հնչվում է որպէս ց, և ց տառը մնում է դարձեալ  
ց, դորանից յառաջ է գալիս—

ա) կորուստ հնչմանց հետևեալ գրերի՝

ծ, ճ, տ, կ, պ,

բ) նոյնահնչունութիւն հետևեալ տառերի՝

ձ—ց, ջ—չ, դ—թ, պ—ք, բ—փ:

Այսպէս Պօլսեցիք միակերպ հնչմամբ են կարգում—  
չար և ջար, ջուր և չուր, բարի և փարի, փարիզ և  
բարիզ, տար և թար, թուր և զուր և այլն...

Աորա հակառակ՝ մեր բարբառի մէջ ոչ կորած հըն-  
չիւններ կան և ոչ նոյնանչիւն դառած գրեր:

Մեր նախնի հարց թարգմանութեանց և շարադրու-  
թեանց մէջ չես գտնիլ ոչ մի բառ (օտար լեզուից ա-  
ռած) թէ յատուկ լինի և թէ հասարակ, որ ունենայ իւր  
միջին կամ սկզբին, հետևեալ երեք տառերը—

ձ, ճ, ծ,\*

\* Եւրոպացոյ գրերի մէջ չը կան այդ երեք տառերը, բայց  
Պօլսեցիք իւրեանց սխալ հնչման հնորհիւ, առանց միտ դարձնե-  
լու մեր նախնի հարց ուղղագրութեանը և տառադարձութեանը՝  
գրում են ձավայ, ձոնոն, ալձէպրայ, էնֆիածի և այլն. փոխա-  
նակ գրելու ջ տառը, ըստորում դա նոյնահնչիւն է դառել չ  
տառին:

Այլ մի Տաճկի, Պարսկի, Ռաի և Գերմանացու չես կարող մեր կողմի հայի հնչմամբ արտասանել տալ այդ գրերով գրած բառեր, օրինակ—

Չայն, ձիւն, ձի, ծխտ, ծառ, ծարաւ, ձևտ, ճրագ, ճշմարիտ, ճանապարհ և այլն:

Ինչ գծուարութիւն որ ունի այդ տառերը հնչելու համար մի այլ ազգի, նոյն և մի գծուարութիւնն է կրում և Պոլսում ծնած և սնած հայը, \* բայց ոչ Մշեցին, ոչ վանեցին և Արդուինցին:

Ուրեմն Տփլիսեցին ուղիղ է հնչում, իսկ Պոլսեցին սխալ, — կորուսմամբ և շփոթմամբ, ուստի դառնանք մեր երրորդ խնդրոյն:

## Գ.

Ինչո՞ւ Պոլսեցիք ուղիղ չեն հնչում, իսկ Տփլիսեցիք ուղիղ:

Մեր պատմութիւնը վկայում է, որ վրաց լեզուի տառերը մեր հանձարաւոր Մեսրոպն է հնարել: Վրաց լեզուի մէջ մեր բոլոր հնչիւնները կան, նոցա այբուբենը մերի պէս էլ սկսվում և վերջանում է (ան, բան, դան, դօն, էն և այլն): Վրաց լեզուի մէջ չը կան հետևեալ հնչիւնները—

ա, ե, ը, ո, իւ:

Այս հնչիւնների պակասութիւնը Տփլիսու ժողովրդական բարբառի վերայ ունեցել է այն անհրեքելի և բնա-

\* Բացառութեամբ զ հնչման.



կան ազդեցութիւնը, որ նորա միջեց անհետացել են այդ հնչելները\*

ո, դառել է ր, և այդ պատճառով Տփլիսեցիք ասում են—

Ձէրք, ձմէր, ամար, դար, սարուց, նուր, կուր, փուր. փոխանակ ասելու — Ձեռք, ձմեռ, ամառ, դառ, սառուց, նուռ, կուռ, փուռ:

ե, տարեցտարի նրբանալով դառել է ի, և այդ պատճառաւ ասում են—

Միր, ծիր, ծիր, սիր, կինք, կինաց, քիզ, ծիզ, միզ, իս, իմ, ին, ինք, արիւ, բի, էստի չիմ, չիս ևայլն. փոխանակ ասելու—Մեր, ծեր, ծեր, սեր (սերուցք կաթի) կեանք, կենաց, քեզ, ծեզ, մեզ, ես, եմ, են, ենք, արեւ, բեր, էստեզ չեմ, չես ևայլն:

Ուր էլ մնացել է, այն տեղ էլ մնացել է ոչ որպէս ե, այլ է, օրինակ—

էլաւ, էլաւ, էլեղեցի, կէրայ ևայլն.

Ո տառը փոխանակ հնչելու վօ, հնչվում է վու: Ասում են—

վուր, վուչ, վուտ, պարուն, վուրք, վուրթի, կտուր, բու, թուղ, հուղ, լուղ ևայլն փոխանակ ասելու. որ, ոչ, ոտ, պարոն, որք, որդի, կտոր բո, թող, հող, լող—

\* Վրաց լեզուի ազդեցութիւնը հայկական հնչիւնների վերայ սկսուել է ոչ թէ Տփլիսից, այլ Անի քաղաքից. ես այս ենթադրում եմ առ այժմ, չունենալով մանրամասն տեղեկութիւն, թէ Բագրատունեաց իշխանները որպէս կալուածատէրեր և որպէս թագաւորներ, որքան վրացի գաղթականներ ունէին իրանց մօտ: Ես համարձակում եմ ենթադրել այլեւ, որ Անի քաղաքում և նորա շրջականերում բազմաթիւ հայացած վրացիք սիտի վիսին եղած: Մեր հնագիտութեամբ պարապողները եթէ կամենան այս նիւթը կարող են լաւ մշակել և պարզարանել:

Որ բառերի մէջ որ չի փոխուել, այնտեղ հնչվում է որպէս օ, օրինակ—Օսկի, (ոսկի) օրմին (դքմին), գործխական հոլովների վերջաւորութիւնը (օվ), ներկայ ընդունելութեան վերջաւորութիւնը (օղ) և այլն. և այլ շատ բառերի սկզբում և մէջերում:

Ի դառել է ի և ու, օրինակ—բարութիւն, (բարութիւն), դորութիւն, (զօրութիւն), արուն, (արիւն), իղ, (իւղ), իր (իւր):

Ը տառը գործ չին դնում այն Տփխիսեցիք միայն, որոնք բոլորովին վրացու պէս են խօսում և կամ հայասխօս վրացիք են և կամ յաճախ գործ են դնում ոչ իւր տեղը: Վրացիք մի երկրորդական դ տառ ևս ունին, որ ըստ ձևոյն մեր ց տառին նման է (յ): Այդ տառը կոկորդային հընչիւն ունի, բայց աւելի գոմշի հնչման նման է քան թէ մարդու: Տփխիսեցիք մեր դ տառը գորա պէս են հնչում շատ բառերի մէջ\*:

Պօլսեցիք կարդալով այս նկատմունքը, պիտի խնդան վերաս, պիտի ասեն այդ է քո գոված և անարատ մնացած հնչիւնները: Այ՛, այս է: Ես փառք եմ տալիս Արարչին, որ մեզ միայն այս չափով է պատժել, բայց այս

---

\* Այս իմ մի քանի նկատմունքս բաւական է Տփխիսու բարբառով գրող պարոնների համար, որ այսուհետև խելքներին զօռ տալով չը գրեն այս և այն բառը իրանց չփոթուած լեզուով և ոչ էլ այս և այն պառաւին հարցնեն, այլ նոցա անդիտակցաբար խօսելուցը միայն օգուտ քաղեն: Վերջապէս չը գրէ այն մարդը, որ մոռացել է և պիտի դժուարութեամբ մտածելով ու թարգմանաբար և աղաւաղ դարձուածքով ու ոճով գրէ: Բարբառներով գրածները մեր լեզուի համար, միայն այն ժամանակ ունին կատարեալ նշանակութիւն, երբ նոքա կենդանի զբուսածքներ են և ոչ թէ շինովի: Տփխիսու բարբառով որպէս



մի իրական վաստ չէ՞ արդեօք, որով կարելի լինի առաջուցանել թէ՛ ապա ուրեմն Պօլսեցոց բարբառը, նամանաւանդ նոցա հնչիւնները, որքան աղաւաղուած, կորած և շփոթած պիտի լինի շնորհիւ տաճիկ լեզուի, որ միանաճառնի խառնուրդ է թաթարի, պարսկի և արաբի և չուհի մեր Մեսրոպեան հնչիւնները:

Տիկիսեցիք միւս բոլոր տառերը հնչում են ինչպէս վրացիք նոցա համապատասխանող տառերը: Հետեւեալ երեսն վերայ դրել եմ՝ դորա աղլւօակը, որոյ վերայ աւելացրել եմ նաև Գաղղիական, Ռուսական և Պարսկական տառերը ըստ մեր հնչման:

---

լաւ գրուածներ եւ կարող եմ մատնացոյց լինել միայն պարոն Տէր Աղէքսանդրեանցի գրածների վերայ: Ես այս նիւթը գրելու ժամանակ այդ բարբառով ոչ մի գրուածք չունէի ձեռքիս տակ, ըստ որում իմ նպատակս առ այժմ բարբառ քննել չէ ըստ ամենայն մասանց, այլ հնչիւն: Ես միայն մատնացոյց եմ լինում այն կանոնի վերայ, ինչ որ շատերը չը գիտեն և վնասում էին: Իմ ակնարկութիւններն զգուտ քաղելով, Տիկիսու վրացադէտ երկրատարղները կարող են այս նիւթը աւելի լաւ մշակել, և քանի որ ուշ չէ դեռ ես, այնպիսի կանոններ դուրս բերել, որ մեզ կօղնէ նաեւ միւս բարբառների քննութեան ժամանակ:



Աղիւսակ նմանաՀնչիւն տառերի:

Ներս	Պարս	Իտալ	Ֆրանս	Եթովպ
բ	ⲃ	б	б	b
դ	Ⲅ	д	д	g
դ	ⲅ	д	д	d
ը	Ⲇ	—	—	—
ձ	ⲇ	—	—	—
պ	Ⲉ	—	п	p
կ	ⲉ	—	к	k
տ	Ⲋ	—	т	t
ժ	ⲋ	—	—	—
ճ	Ⲍ	—	—	—
փ	ⲍ	ф	—	—
թ	Ⲏ	т*	—	—
ժ	ⲏ	г	—	—
ց	Ⲑ	—	ц	—
չ	ⲑ	—	ч	—

Այս Աղիւսակը անհերքելի ցոյց է տալիս, որ մեր Հնչիւններին Համարձակութեամբ լինելու և անհերքելի միայն վրաց Հնչիւններն են, իսկ միւսները կան Հնչիւններին մէջ չը կան այն Հնչիւնները, որոնք կորուստած են Պարսկացիքէն:

\* Պարսկերէն թափ տառը կիտիլով չէր գրուած, որովհետեւ այն պատճառով որ Պարսկերէն արեւելի լեզուի լեզուի է:

Այժմ մնում է մեզ ապացուցական փաստեր մէջ բերել, որ ինքեանք վրացիք ուղիղ են հնչում, վասն զի եթէ վրացիք ուղիղ չը լինին հնչելիս, չի կարող և մերը ուղիղ: Համարուիլ որպէս նոցա հնչմանց յար և նման:

1) Վրացիք չունին յունական, լատինական և նոյն խի հայկական լեզուաց պէս հին և մեռեալ լեզու: Նոքա ինչպէս խօսելիս են եղել հինգերորդ դարումը, նոյն և մի կերպով խօսում են և այսօր, վասն զի նոցա Աստուածաշունչը, ժամերգութիւնը և բոլոր թէ եկեղեցական և թէ պատմական գրեանց լեզուն միակերպ հասկանալի է ռամիկ ժողովրդեան\*, բոլորովին այնպէս, ինչպէս մեր այժմեան աշխարհաբառը հասկանալի է մեր աւելի մաքուր խօսող դաւառացոց:

2. Վրացիք չունին այլ և այլ բարբառներ\*\*, այլ բոլորն միակերպ են խօսում և շատ բնական է մի բուն և իւր տեղն անշարժ մնացած ժողովրդեան համար: Բոլոր վրաստանը Հայաստանի մինահանգի չափ հասցիւ կը լինի:

\* Կան բազմաթիւ բառեր, որոնք հասկանալի չեն ժողովրդեան, սակայն տոքս չեն բուն վրաց լեզուի բառեր, այլ յունական կամ հայկական: Վրաց լեզուն հայերէնի համեմատութեամբ շատ ազքատ է բառերի կողմից, և այդ պատճառով մի որ և իցէ լեզուից թարգմանելու ժամանակ կամ մի ուսումնական յօգուած հեղինակելիս, ստիպվում են օտար բառեր գրելու, չունենալով իւրեանց սեփականը:

\*\* Եւ Վրացի կամ ասում միայն վրաստանում եղողներին և ոչ Իմէրէններին, Փշաւներին, Խէվսուրներին, Օսերին, որոնք թէպէտ գիտեն վրացերէն, սակայն դոցա խօսեցածը մաքուր վրացերէն չէ, և ունին իրանց համար առանձին լեզու: Այլ և հընձիւնների կողմանէ դոցա և բուն վրացոց մէջ տարբերութիւն չը կայ: Բայց առողանութիւնը շատ տարբեր է:



Սոքա Հայերի պէս չեն դաղթել, այլ եղել են գերուօղներ միայն դէպի Պարսկաստան և Տաճկաստան, բայց նոքա Պօլսեցոց պէս չեն պահել իւրեանց ազգութիւնն այդ անդերուձը, որ ժամանակին կիսատաճ կի և կիսապարսկի լեզուով խօսելով մի նոր բարբառի գրականութեան հիմ դնեն, այլ բոլորովն խառնուել են, նոյն ազգաց հետ և անհետացել: Սոցա այժմեան գրականական բարբառն ևս մի է, և հնոյն պէս հասկանալի, այս բացառութեամբ միայն, որ սա այժմ մտցնում է իւր մէջ բաղմամբիւ Աւրուպական բառեր: Պէտք է ասել, որ բառերի կողմանէ վրաց լեզուն բաւականին չքաւոր է, ինչպէս և ազգն ինքը հնադարեան տղիտութեան մէջ մնացած: Բայց նոյն իսկ այս հանգամանքն է պատճառ, որ սոցա թէ գրականութիւնը և թէ ինքեանք միակերպ անվտիտիս գրութեան մէջ են մնացել չինական ազգի պէս: Ահուհն շատ անգամ մեռնում է ժողովրդեան համար, և միմիայն այն պատճառաւ, որ ժողովրդին անշարժ թողնելով ինքն սկսում է յառաջ խաղալ և հասնել մինչև եօթներորդ երկինքը, որ այնտեղ հրեշտակներին հասկացնէ իւր ասածները:

Այն լեզուի մահուան գլխաւոր պատճառներից մինն այն է, որ քմահաճ արհեստաւորներ են դուրս դալիս և կատարելագործելու մտօք այս կտորը վերցնում, այն կտորն աւելացնում, այս ինչ բառը տգեղ համարելով դործ չը դնում, մի օտար բառ նորա տեղը դնում, այս ինչ ոճը ռամկական է ասելով, պէտք է աւելի խրթին աւելի վսեմ գրել, միով բանիւ մաքրում ենք, կոխում ենք, վսեմացնում ենք ասելով, հեռացնում են օրէցօր կինդանի, ժողովրդեան խօսակցական լեզուից և բոլորովն անհասկանալի անում նորան: Ենթադրեցէք սորա հետ և այն հանգամանքը, որ այդ գործը յառաջ է դնում միայն մի

դասակարգի մէջ ու մի գաւառում, և մի և նոյն ժամանակ ուսումնարաններ բանալու և նոյն մարտի և վսեմացուցնալ լեզուն ժողովրդի մէջ տարածելու, խօսակցական առնելու հոգս չի տարվում, այնուհետև հեշտ կը լինի ձեզ ըմբռնել, որ այդ լեզուն եթէ ոչ մի հարիւր, անշուշտ երկու հարիւր տարուց յետոյ թէ ժողովրդեան, թէ նոյն իսկ իւր զրոյններն համար կը դառնայ մի արհեստական և մտնալ լեզու:

Վրաց լեզուն չի ունեցել ոչ Նարեկացիներ, ոչ Մաղխարոսներ, ոչ Շնորհայլներ և ոչ վերջապէս Աբբայականներ: Ազգը քրիստոնէացել է, այդ առթիւ հարկաւոր է եղել զիր և զրականութիւնն ունենալ, մի կողմից մեր Մեսրոպն է օգնել, միւս կողմից մեր Կսթուղիկոսունք: Ձեռք են վերցրել հայերը, դադարել է և նոցա զրականութիւնը...

Վերջապէս ևս նոցա հնչիւնների անարատ մնալը այդ բոլոր հանգամանքների հետ և իւրեանց անկախութեանն եմ տալիս, որ տեւել է մինչև մեր դարու սկիզբը (թէև ընդհատուելով փոքր ժամանակամիջոցներով), այլև որ բացի Հայերից իրանց հետ խառն բնակող այլ ժողովուրդ չեն ունեցել երկար ժամանակով:

Ուրեմն վրաց տառերի հնչիւնները ազատ են մնացել դարերի հոսանքներից և պահպանել նոյն և մի հրնչիւնները, որ առել է մեր Մեսրոպը հայկական տառերի հնչմանց համեմատ:

Տիկնիսեցիք վրաց լեզուին են պարտական, որ իրանց հնչիւնները մաքուր են պահպանել մինչև այսօր, սորա հակառակ Պոլսեցիք որ կորցրել են իրանց հնչիւնները, դորա պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ ճաճկաց լեզուն: Այս հանգամանքի հետ պէտք է ՚ի նկատի ունենալ և ոչ



պակաս ուշադրութեան արժանի մի այլ հանդամանք — այդ է Տաճկաց փափկանալը և քնքշանալը, ինչպէս կենցաղափարութեամբ, նոյնպէս և խօսակցութեամբ, որպէս զի ուրոշութիւն թէ՛ իրանք զիւզական ռամիկներ չեն կոշտ ու կուպիտ, այլ մայրաքաղաքացի, քաղաքակրթեալ և ուսեալ: Հնչմանց մէջ նորաձևութիւն մոցնելը մի տարօրինակ բան չէ մեծ քաղաքներումը և մեծամեծաց տներումը, այդ բանն սկզբում է հարեմներից և պալատներից և սակաւ առ սակաւ վարակում ամբողջ քաղաքը:

Քանի՞ տարի է, որ Պոլսի հայերը սովորութիւն են արել հայերէն խօսիլ, ուսումնարաններ և դրականութիւն ունենալ, — համարենք երեսուն տարի, թող լինի մինչև անգամ յիսուն: Ուրեմն նախընթաց հարիւրաւոր տարիներից սկսեալ մինչև այսօր դոցա Տաճկերէն խօսիչները ոչ մի ազդեցութիւն չի՞ արել դոցա լեզուի և հնչմանց վերայ: Գիտե՞ն արդեօք Պօլսեցիք, որ այդ կը լինէր մի դերբնական բան:

Եթէ ես փոքր ինչ տաճկերէն լաւ իմանայի, արաբական լեզուի հետ քիչ շատ ծանօթ լինելի, քայլ առ քայլ ցոյց կը տայի այն բոլոր կերպարանափոխութիւնը, որ տաճկերենի ազդեցութեամբ պատահել է Պոլսի բարբառին թէ հնչմանց և թէ դարձուացքների և ոճի վերաբերութեամբ:

Թէ ինչ բան է քննութիւնը, ուսումնասիրութիւնը, ինչ եղանակով կը լինի այդ, դորա մասին ոչ ինչ հասկացողութիւն չունին մեր Պոլսի եղբարք: Այս նկատիս վերաբերութեամբ զոնէ այսքանը թող գիտենան որ —

Միատեսակ հնչիւններ ունեցող ազգաց հետ աւելի երկար ժամանակ կարող է պահպանել մի ազգ իւր հնչիւնները, քան թէ այլահնչիւն ազգաց հետ:

Եստ ժամանակ չէ, որ մեզանում ծիծաղել նիւթ

գտաւ անամօտութիւն բառը, որ գրել էին «Մշակին» ծաղրելու. համար Մի հայ մարդու համար մի<sup>օ</sup>թէ աւելի հեշտ է անամօթութիւն ասելը, քան թէ անամօտութիւն: Բայց սա մի շատ բնական բան է և մեկնուում է ահա ինչպէս, Ռուսաց գրերի մէջ չը կան հետեւեալ հնչիւնները Պ, Օ, Ե, Օ, Ծ, Շ, Փ, Ը:

Մեր այն երիտասարդները, որոնք մանկութեան հասկում ուստաբար են զարգանում և սնանում, ահա այդ հակազգային և հակակրթական եղանակով մեծացած մանուկները երբոր իրանց հասակն առած ժամանակ զգում են, որ իրանք հայի զուակ նն, և սխում են հայերէն խօսել և հայերէն գրել, այդ միջոցին նորա վերը բերուած տառերը ուստական տառադարձութեամբ են հնչում, այն է Պ-ի տեղ օ, Փ-ի տեղ պ, Ը-ի տեղ ւ, և այլն: Գրելու ժամանակն էլ գրում են այնպէս, ինչպէս հնչում են:

Երևակայեցէք այժմ, որ մեր աշխարհիկ զրահանութեամբ զբաղուած մարդիկ չունինք, չունինք լրագրեր աշխարհիկ բարբառով. մայրենի խօսակցական լեզուն որպէս ուսուցանելի առարկայ չի աւանդվում մեր ուսումնարաններումը, այլ միայն վանքերումը փակուած աշխարհից հեռացած հին զրականութեան շարունակողներ ունինք:

Արդեօք այդ ժամանակ ում և իցէ աչքի կը զարնուէր անամօտութիւն ասելը. Նարեկացու ոճին հետեւող մի մարդու շատ զգայի կը լինէր, թէ այս և այն մարդը իւր ուսմիկութենի մէջ փոխանակ անամօթութիւն ասելու, անամօտութիւն է ասում: Եւ ի՞նչ էք կարծում, այդ գրութեան մէջ մնալով շարունակ քանի մի տարի, արդէն մի նոր սերունդ չէր յառաջ գալ, ուստաց հնչիւնների շնորհիւ, տանից աւելի հնչիւններ կորցրած իւր բուն ազգային բարբառից: Օտար լեզուն ոչ միայն մարդուս ազգա-



ինն հնչեւններն է փոխում, այլ և նորա գրութեան և խօսակցութեան ոճը և դարձուածքը: Ամեն փոքր ՚ի շատե իմացական փիլիսոփայութիւնից տեղեկութիւն ունեցողին շատ պարզ յայտնի է դորա պատճառը: Խմ նպատակիցս դուրս կը գամ, եթէ ես այժմ սկսեմ ոճ և դարձուածք քննել, այդ մասին ես ուրիշ անգամ տեղիք կունենամ խօսելու: Այսքանս ասեմ միայն, որ ինք զինքը ճանաչելը այնքան հեշտ չէ, ինչքան կարծում են: Կան մարդիք, որ շատ լաւ էլ գիտեն իմացական փիլիսոփայութիւններ, բայց այդչափի զիտութիւնը զեռ ևս չի կարողացել այդ անձնաւորութեանց ուղեղին մէկ զարկ տալ, որ միանգամ քննեն իրանց անձը, իրանց հողին, իրանց խօսքը և խօսելու եղանակը:


Քիմիագէտները վերլուծելով զանազան մարմիններ շատ անգամ դտնում են երկու այնպիսի մարմին, որոնց մէջ թէ պարզ տարերքների և թէ նոցա քանակութեան մէջ դրական ճշտութիւն և հաւասարութիւն կայ. բայց որ զատ-զատ մարմիններ են, դորա պատճառն այն են դտնում, որ իւրաքանչիւր մարմին մէջ տարերքի հիւլէները այլապէրպէս են դասաւորուած: Օրինակ, վեր են առնում շաքար և նաշիշտայ, ենթարկում են քիմիական վերլուծութեան և տեսնում, որ ինչպէս մէկի, նոյնպէս և միւսի մէջ կան վեց մաս ածխածին, հինգ մաս ջրածին և հինգ մաս թթուածին: Այս տեղակամայիցս հարց է յառաջ գալիս, թէ քանի որ երկոցունց մէջն ևս այդ տարերքների քանակութիւնն հաւասարաչափ է, ի՞նչ տեղիք է մտում մէկին լինել շաքար, և միւսին նաշիշտայ: Հիւլէականները ասում են, որ դորա պատճառը ուրիշ բան չէ, այլ այն, որ մէկի մէջ տարերքի հիւլէները այլակերպ են դասաւորուած, միւսի մէջ այլ: Օրինակ վեց հիւլէից կարող է մի մաս ածխածին բաղկանալ այլ և

այլ դասաւորութեամբ, ինչպէս վեց մարդ կարող են կանգնել մի շարքով, կարող են կանգնել երկու շարք, իւրաքանչիւրում երեք հոգի, կարող են կանգնել երեք շարք, իւրաքանչիւրում երկու հոգի, վերջապէս կարող է լինել 1, 2 և 3, 1 և 5, 2 և 4 և այլն: Եւ ահա այս դասաւորութեան ձեւն է պատճառ, որ երկու մարմին միաշարի և միատեսակ տարերքներից բաղկացած լինելով, չեն նմանում միմեանց թէ ըստ ձևոյն և թէ ըստ յատկութեան, ինչպէս այս օրինակի մէջ շաքարն ու նաշիշտան են:

Ուրեմն հիւլէների շարքերը կարողանում են մի առարկայի այլ հոտ ու համ տալ, միւսին այլ. մէկին համեղութիւն միւսին անհամոթիւն:

Սուտ է արդեօք այս տեսութիւնը, թէ ճշմարիտ, ես չեմ կարող ոչ հերքել և ոչ ապացուցանել, բայց կարող եմ ասել, որ սորան ավելի հաւատալ, քան թէ չը հաւատալ կարելի է, վասն զի ինչ են մարդկային հընչիւնները, բառերը, դարձուածքները, ոճը, եթէ ոչ հիւլէական շարք, այս տեսութեան բողոքովին համաձայն: Թէ մեր նախնիք ինչ մտքով են ասել շարադրութիւն կամ շարադրութիւն ես այդ չը զիտեմ, բայց այսքանը զիտեմ, որ այս կամ այն միտքը յայտնելը, որքան որ բառերի քանակութիւնից և տեսակից կախումն ունի, այնքան և նուցա շարքից, շարադրութիւնից, որ կարող է շաքար կամ նաշիշտայ շինել: Այսպէս շատ անգամ ինձ հարցրել են «որտեղ գուք ասրում էք:» և թէ ասելու էլ լինին «որտեղ գուք կենում էք», դարձեալ շաքար չի դառնալ, այլ կը մնայ նաշիշտայ, թէ և միւսնոյն բառերն են: Մի հատիկ բառ իւրեան տեղը չը լինելով հարցականից յարտմական է շինում նախադասութիւնը, վասն զի «որտեղ»

893-2013





էք կենում, հարցական նախադասութեան շարք է, «Որտեղ կենում էք» պատմական նախադասութեան շարք է:

**Այլ առակ լուարուք:**

Պատուական Մասիսի լեզուասէր խմբադիրը մի ժամանակ սկսաւ հետևիլ մեր դարձուածքներին, փոխանակ գրելու իրանց բարբառի դարձուածքով գրած է, սսած է, սկսաւ գրել ըստ մեզ սսել է, գրել է, բայց չինանալով մեր բարբառի շարքը և ոչ մեր որոշիչ տառերի գործածութիւնը, մի անգամ էլ գրել էր այսպիսի մի նախադասութիւն —

«Այս խօսքը Պատրիարք Հայր ասել է, ուզում է ասել-Այս խօսքը Պատրիարք Հայրն է ասել, բայց իւր կամեցածի հակառակ դուքս է եկել, որ «խօսք» և «Պատրիարք Հայր» նոյնանշան բառեր են, որ ասել է թէ ուզեցել է շաքար շինել, բայց զուրս է եկել նաշելուայ:

Լեզուն մի զեղարուեստական, գեղեցիկ և զարգարուն շինուածք չէ. ոչ, այդ շինուածքը մեռած է, շունչ չունի, հոգի չունի, բայց լեզուն մի գործարանական շինուածք է, հոգի ունի, նորա ստեղծողը բնական, հոգեկան և քաղաքական հանգամանքներն են, որով մի ժողովուրդի լեզու սկսում է աստիճանաբար զարգանալ կամ զարգացումից զրկուիլ շեղուիլ իւր նախնական յատկութիւնից կամ երկարատե պահել նոյն յատկութիւնքը: Լեզուն անհատի սեփականութիւնը չէ, որ ո՛վ ինչպէս կամենայ, այնպէս ծումնէ: Բողիկ մէջ կտաւատ ցանկով կարող ես տարխուն բուսցնել և մէկով աւելացնել քօկանաչեղէնի թիւը, սակայն տարխունը սերմ չունի, որ բնութեան հողմերի ձեռքով տարածուի ընդ ամենայն տեղիս: Քանի որ ոչ տպագրութիւն կար և ոչ պարբերական հրատարակութիւնք, ո՛վ ինչպէս կամենում էր այնպէս էր գրում, և ոչ ոքի

պէտքը չէր թէ նա ինչպէս է գրել կամ ինչու համար: Բայց այսօր այդ անհատական և խուցական նեղ շքի-  
ջանից դուրս ես եկել և երես առ երես ժողովուրդի հետ  
ես խօսում, նորա համար գրում, նորանից վարձ սու-  
նում: Այժմ ժողովուրդը ձայն ունի քո գրութեան ոճի  
և դարձուածքի մէջ, նա ասում է. «սիրոն, ես եմ քեզ  
ապսպարողը, այդ բանը ինձ համար ես գրել, բայց լա-  
չես կատարել իմ պատուէրները, դու իմ լեզուս աղձա-  
տում ես, և ի՞նչ իրաւունքով»: Ուրեմն այժմ՞ դժուար է  
քմահաճութիւն անելը, ժողովուրդի ոճի աղաւաղումը, նոյն  
խիզ գրողների օգուտը չի թոյլ տալիս այդ: Մեր բոլորու-  
նաճների մնացորդներն անգամ, որ աստիկ պաշտպան են  
գրաբարի, ինքեանք չեն հրատարակում ոչ ինչ գրաբար:  
Ինչ՞ո՞ւ ժողովուրդը չի առնում, ո՞վ պիտի վճարէ տպա-  
գրութեան ծախքը...

Մեր Ղարաբաղու բարբառի շարքը, բոլորովին նոյն է  
ինչոր արարատեանինը, Քիֆլիսի բարբառը այդ կողմանէ  
հազարից մէկ տեղ շեղվում է: Բայց այս բարբառների  
շարքը համեմատելով Պօլսեցոց գրածի հետ, այն տարբե-  
րութիւնն է երևում, ինչ տարբերութիւն որ կայ հայե-  
բէնի և տաճկերէնի մէջ: Ղրաց լեզուի շարքը մեր շար-  
քից շատ քիչ տարբեր է, այնքան, որ կարելի է ասել, թէ  
համարեա՞ տարբերութիւն չը կայ: Տաճկերէնի շարքը շատ  
տարբեր է, ուսերէնինը առաւել շատ:

Պօլսեցոց բարբառը մեծ կերպարանափոխութիւն է  
ստացել սկսեալ Ռուբինեանց իշխանութիւնից մինչև մեր  
օրերը, և վերջ 'ի վերջոյ բոլորովին տաճկացել ըստ ու-  
ճոյն: Կոցա բանասէրները այս մեծ անցքից բոլորովին տե-  
ղեկութիւն չունենալով, զարդարում են իրանց տաճիկ  
բարբառը ֆարսիցի նորեւախնդով, կտրում են եղունկները,



մորուքին հինաց զնում, մասներին թանգագին մատանիք: Մէկն ասում է եկէք էլ այսուհետև այս ինչ բառը գործ չը դնենք, միւսն ասում է, այս ինչ մասնիկը տղեղ է, հարկաւոր է ոչնչացնել բողբոլին և այլն: Խնդալս զալիս է, երբ այդ Արակոսները մեզ էլ խորհուրդ են տալիս, որ մեր ուսման վերջաւորութիւնը վերցնենք և դորա փոխանակ բայի սկզբումն աւելացնենք կը մասնիկը որպէս ներկայ ժամանակի մասնիկ: Թէ որքան թորոս են այդ մարդիքը, կարող էք եզրակացնել նոյն իսկ այդ խորհրդատուի գրած հետևեալ տողերից

«Քաղցր է ինձ յուսալ որ Թիֆլիսի Մշակ և Մեղու լրագրաց զիտնական խմբագիրները նկատողութեան կառնուն (ե՞րբ) մեր զիտողութիւնքը, որով մեր լեզուն աւելի կազնուանայ (ե՞րբ, երևի երբոր մենք էլ ձեր կոր մտանիկի պէս մեր ուսման վերջաւորութիւնը վերցնենք և ներկայի ձեր ասպառնի ձևի հետ նոյնացնենք) և նշանակութիւն կունենայ (ե՞րբ) և հետզհետէ գրական լեզու մի կունենամք (ե՞րբ)... Անշուշտ Ռուսիոյ խմբագիրք ևս կը մերժեն (այ՛ո կը մերժեն անշուշտ այդպիսի ներկան) իւրեանց գրուածներուն մէջէն... (Մասիս թ. 1546):

Ասացէք տեսնեմ որ ազգի լեզուի մէջ կայ այս տեսակ ներկաներ: Այս էլ հնչիւնը չէ, որ լսողութիւնից կախում ունենայ, միթէ ըմբռնում, դատողութիւն էլ չունին մեր Պօլսեցիք:

Այս խորհրդատուն, որ մեր Մշակի հերոս Մկրեանն է, մեզ խրատ էլ է տալիս. որ մենք փոխանակ գրելու Նապօլէօն, գրենք Նաբօլէօն (!?!), որով և ռախպում է ինձ զառնալ մեր չորրորդ խնդրոյն—

## Դ.

Սխալ հնչողը ինչպէս պիտի կարողանայ ուղիղ դրել:

Ես այժմ պիտի խօսիմ այն նիւթի վերայ, որի մասին արդէն խօսացել են մեր բազմալատակ և հռչակաւոր գիտնականք Մ. Էմին, Գ. Ալավերդեանց, Ս. Նազարեանց և Ք. Պատկանեանց և սոցա հակառակ Մխիթարեան հարք, տաւելապէս Սրբազան Գ. Այվազեանց: Շատ կարելի է, որ Պօլսոյ հայերը մեր գիտնականների գրածներէց ոչինչ տեղեկութիւն չունին, և այդ է պատճառը, որ հետևում են Ս. Այվազեանի անհիմն և սխալ տեսութեանը: Ես այժմ միջոց չունենալով մեր գիտնականների ասածները Ս. Այվազեանի քննութեան հետ համեմատելու, այլև հարկաւորութիւն չըզգալով այդ բանի մէջ, ըստ որում յուսով եմ, որ իմ բերած փաստերը միանգամայն պարզեցին այդ տարակուսական խնդիրը, թէ ո՞ւմ հրնչիւններն են ուղիղ, ես այժմ մասնացոյց կը լինիմ մի քանի եղանակների վերայ, որին եթէ հետևեն Պօլսեցիք շատ հեշտութեամբ կը գրեն ուղիղ:

Առաջին եղանակ: Վենետիկցիք իրանց պատուական և հարուստ բառարանի մէջ իւրաքանչիւր տառի սկզբում մի մի խրատ են առաջարկում, թէ այլ լեզուների ո՞ր հնչմանն է համապատասխան նա, օրինակ Բ տառի համար նորա ասում են «ի տառտղարձութեան յայլոց լեզուաց 'ի մերս' 'ի մեզ ք, ուր առ նոսա է պ»:

Միայն պէտքէ գիտնալ, որ բառարանի հեղինակները «ի ասելով ըստ իւրեանց հնչման ակնարկում են Եւրոպացոց երկրորդ տառին, որ ասել է ք=ն: Այտեղ միայն պ տառի հնչմունքն է սխալ, իսկ հետևանքը ուղիղ է: Բայց որքան ցաւալի երևոյթ է այս: Բոլոր քրիստոնէից համար



ինչպէս ա տառը ամենի համար ա է, մի լեզվում ա չէ, միւսում է, այնպէս էլ բոլոր Վերոպական ազդաց մէջ բըն բը է և ոչ ուրիշ հնչուէն: Մենք էլ բոլորովին Վերոպացոց երկրորդ տառի պէս ենք հնչում մեր երկրորդ տառը: Այս համաշխարհական կանոնաւորութիւնից շեղուել են միայն Պօլսեցիք և Մխիթարեանք մինչև այն աստիճան, որ Վերոպացոց երկրորդ տառի հնչելէնը հասկացնելու համար մատնացոյց են լինում մեր քսանըփեցերորդ տառի վերայ: Նա չէ՞ր լինիլ արդեօք, որ Մխիթարեան հարք իրանց անսխալ չը համարէին, այլ ասէին միանգամ, թէ «մենք տառը ուղիղ չենք հնչում, սորան պէտք է հնչել այնպէս, ինչպէս բոլոր Վերոպացիք հնչում են իրանց երկրորդ տառը, և ինչպէս մինչև այսօր էլ այդպէս են հնչում մեր հայաստանցի եղբարք.....» Ինչև իցէ, եթէ Պօլսեցիք ըստ իւրեանց այժմեան հնչման հետեին յիշեալ բառարանի խրատին կարող են սխալ չանել երբէք տառադարձութեան ժամանակ:

Երկրորդ եղանակ, Համարենք որ հայերէն տառադարձութեամբ պիտի գրենք մի Վերոպական բառ, և թող լինի դա ըստ ձեզ Նաբօլէօն և ըստ մեզ Նապօլէօն, այժմ հարկաւոր է մեզ իմանալ, թէ ինչպէս գրենք, որ ուղիղ լինի: Այս տեղ բանը մի տառի վերայ է, այն է Վերոպական Ք տառը: Մենք ուշ չենք դարձնիլ ոչ մէկի գրածին, ոչ Հայկազեան բառարանին և ոչ մեր վարժապետի և ուսումնականաց խրատին, այլ միտներս կը բերենք Աստուածաշնչիցքանի մի բառ այդ տառով սխալող, օրինակ Պօնտոս, Պիղատոս, Պաղեստին և այլն, և միտներս կը բերենք թէ այդ բառերը մեր լեզուի մէջ ինչ տառով են գրել մեր խնկելի թարգմանիչք, կը տեսնենք որ ա, մենք էլ կը գրենք ա, և ոչ թէ ր. և պարօն Մկրեանին էլ կասենք, որ առաջ ինքը սովորի և ապա մեզ սորվե-

ցնէ: Նիտեմ և շատ լաւ զգում եմ, որ այժմ դուք սխալ գրում էք եւ ուղիղ ճշտում, իսկ եթէ ուղիղ գրէք պիտի սխալ ճշտէք: Բայց ինչ անենք, յերկուց չարեաց փոքրագոյնն է ընտրելի: Գուք արդէն հապարաւոր բառ ուղիղ գրում էք եւ սխալ հնչում, քանի մի հատ էլ հիմի աւելացրէք վերան, ինչ վնաս ունի, բայց այն օգուտն ունի, որ մեր ուղղագրութիւնը միանման կը լինի: Մեծամեծ ուղտեր և փղեր էք կուլ տուել, այժմ ակտրժակ չունի՞ք քանի մի մանր մեղուկներ ևս կուլ տալու, մինչև վերջապէս աչքներդ բացուի և լաւ ճանաչէք ձեր կերածն ու ասածը.....

Երորդ եղանակ: Համարենք որ ձեր գրելի բառը թարգմանական չէ, ոչ մի բառարանում և զրքում չը կայ, այլ ճանապարհորդում էք մի անծանօթ ազգի մէջ, օրինակ ասենք Վրաստան, հարցնում էք այս և այն բառը և սխում էք գրել, ահա այդ ժամանակ ձեր գրածը մեր գրածի պէս չի լինիլ: Ինձ իձեանն ինքը այս տեսակ սխալներ շատ է արել, ուր մնաց որ դուք, որ ոչ էք մեծ քան զվարդապետ ձեր: Օրինակ, նա գրել է Կօրի այն քաղաքի անունը որ մենք ասում ենք և գրում Գօրի: Այժմ դուք նորա գրածը, այնպէս կարտասանէք, ինչպէս մենք մեր գրածը, բայց փոխադարձաբար սխալ կը հնչենք: Այսպիսի զխառածներում խորհուրդ եմ տալիս ՚ի նկատի ունենալ իմ գրած աղիւսակը, և Եւրոպական հրնչմանց համապատասխանող տառերը գրել, հեռեկող այն առածին, որ ասում է Կանձարը կէրել է բանձարը.....

## Ե.

Ես կարող էի այս նիւթիս վերայ այնքան երկար



զրեւ, որ աւելի ընդարձակ կը լինէր, քան թէ Հ. Այսրնեանի Քննական Քերականութիւնը\*, բայց ասած է. «Աստուած որ տայ, մէկ ահօսից էլ կը տայ»։ Հասկացողը այսքանից էլ շատ բան կը հասկանայ, և ինքը կարող է ասել այնուհետեւ այն, ինչ որ ես պիտի ասէի, իո՞վ ո՞վ որ չի մտածել այս մասին, նորա համար երկար էլ զրէի, օգուտ պիտի չունենար։ Ես լաւ կը համարիմ այնպիսի մի ուղեցոյցի հանդիպել, որ ինձ ցոյց տայ ուղած ճանապարհը, այնուհետեւ ես ինքս կերթամ առանց նորա օգնութեան, քան թէ հանդիպիմ այնպիսի մի ուղեցոյցի, որ առաջս ընկնի վստահութեամբ, թէ ես քեզ կը տանեմ այս ինչ տեղը, բայց ինքը կոյր լինելով տանէ ինձ մի խորխորատի մէջ ձգէ։

\* Հայր Այսրնեանի Քննական Քերականութիւնը, որպէս առաջին փորձ ամենընտիր և պատուական աշխատութիւն է՝ որպիսին երբէք չէր կարելի յուսալ մեր Մխիթարեան Հայրերից, որոնք սովորաբար ճշմարտութիւն արտայայտելու սակաւ հակամիտ են։ Հայր Այսրնեանը խոստովանում է, որ արեւելցոց հնչմունքն ուղիղ է և նման է մեր նախնեաց ուղղագրութեանը։ Նա ասում է իրանց համար, թէ մենք «Որոշ կանոն մը չունինք բ կամ փ, դ կամ Թ, դ կամ ք, չ կամ ջ, զ կամ ց զրելու, որ մեր հիմակուան հնչմամբ իրարու հաւասար են»... Յաւալի երեւոյթ։ Այս տառերի հնչիւնները այնքան հեռու են միմեանցից մեզ համար, որ մեր նորեկ աշակերտներն անգամ երբէք չեն չփոթում միմեանց հետ։ Հայր Այսրնեանը իրանց հնչմանց պէս ինքն էլ մնում է չփոթուած և իւր ընթերցողներին խորհուրդ է տալիս երկու տեսակ ուղղագրութեամբ հետեւել օտար տառերի տառադարձութեան ժամանակ։ Նա ասում է հին լեզուաց (այսինքն Յունարէն և Ղաթինարէն) բառերը պէտք է թարգմանել ըստ տառադարձութեան նախնեաց, իսկ նոր լեզուաց բառերը ըստ այժմեան հնչման արևմտեան Հայոց։ Հայր Այսրնեանի հողը չէ, թէ դորանով Արեւելցոց և Արեւմտոցոց, այսինքն մեր և Պօլսե-



Գարձուածքների և ոճի կողմանէ Պօլիան ու Տիլիսի-  
սը ներկայանում են այսօր որպէս իրերահակառակ բեւեռ-  
ներ մի ելևկորացեալ ահագին խտարանի: Չեզոքացնել այդ  
խտարանը չի կարելի մէկէն 'ի մէկ մի դատարկիչով, (այն է  
քանի մի խնաստակների և թերուսների ջախջախեալ զըր-  
չով), վասն զի այդ ձևով մեծ ճայթումն յառաջ կը դայ  
և մեծ հարուած հասցնելով՝ կը մեռցնէ նորան երկոքին  
ժողովրդեան համար, այլ թոյլ տալու է, որ ինքն իրեն  
դատարկուի, բնական կարգով, աստիճանաբար, ինչպէս որ  
լցուել է: Եթէ կամենում ենք օգնել զորա յաջողու-  
թեանը, զորա համար մեր լրողիքները պիտանայու մի-  
ջոյներ չեն, մեզ հարկաւոր են կանոնաւորապէս պատրաս-  
տուած վարժապետներ, առանց սորան մեր բոլոր արած-  
ները և ասածները ձայն բարբառոյ յանապատի են: Բայց

ցոյ ուղղագրութեան մէջ տարբերութիւն կը լինի: Նա ասում է.  
որովհետև հարիւր տարի սորանից առաջ սկսուել է այդ չփոթ  
տառադարձութիւնը, ուստի պէտք է շարունակել: Հարիւր տա-  
րու չափ ագիտութեան մէջ ընկղմուած լինելով, պէտք է մնալ  
այդ սղիտութեան մէջ: Հարիւր տարու չափ Պօլսեցիք չեն ու-  
նեցել նոյ վարժապետներ, այլ կամ Վատին կամ լատինացած  
Հայեր են եղել դոցա վարժապետները և կամ աղջատ հայախօս  
Անգղիացի Միսիօնարներ: Այս օտար և խորթ մարդիկ իրանց բե-  
րանն առնելով հայկական դպրութիւնը, մի նպատակ են ունե-  
ցել միայն — լեզուն կրօնափոխութեան միջոց չինել և ոչ թէ հա-  
յոց լեզուն մշակել: 1714 թուականին Հռովմի «հաւատոյ տա-  
րածման» սպարանում տարուած լատիներէնից հայերէն բառա-  
բանի միտքն ինչ է եղել, որի մէջ ուրանում է Հայկազանց իշ-  
խանութիւնը, հայոյում է Հայերին և փոխանակ գրելու Բազրա-  
տունիք, գրում է փաքուատունիք և միւս բառն էլ այսպիսի  
տառադարձութեամբ աղջատում: Ուրեմն հետևենք այդ խարդախ  
վարդապետին, որ ինք վինքը անուանում է Յակորաւ վարդա-  
պետ Յիսուսեան կարգէն . . .

նվ կարէ յուսալ մեր Պօլսեցիներից այսպիսի մի բան, որ  
խօսքով ճեմարաններ են հիմնում, բայց գործով հիմնա-  
յտասկ քանդում շինածները, արժանաւոր մարդկանց  
մեացնում և նեխեալ դիակներ կենդանացնում, փոխա-  
նակ մի սառն խորհրդածութիւն անելու, մի տուրակ ա-  
ւաղներ կամ ասիական հայհոյանք առաջդ դնում: Ես իմ  
կողմանէ դրանցից ոչինչ յոյս չունիմ, վասն զի իմ տե-  
սութեամբս պէտքէ որ դոցա ուղեղն անգամ կորցրած լի-  
նի իւր ազգային յատկութիւնը..... (իմ այս յանդիմա-  
նութիւնը չի վերաբերում մի քանի հազուադիւա ան-  
ձինքներին, որոնց ձայնը խեղդուած է խսանկիւնաղանձ  
ընդհանուրի մէջ):



# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## Ա.

Մեր ազգասէր Հախվերդեանցը, Տփլիսիսեցոց հնչման պատճառը տալիս է Հաղպատեցի վանականներին, որոնք իբր թէ քաջ հայկարան լինելով, սորվեցրել են Տփլիսի քահանաներին ուղիղ դպրութիւն: Պէտք է ասել, որ մեր պաշտակն գիտնականը ուրիշ մի պատճառ չը գտնելով՝ չէր կարող դռնէ այդ հանդամանքը չը յիշել: Այս փաստը (զույճ), որպէս մի պատմական իրողութիւն, արժանի լինի ուշադրութեան, սակայն լեզուի դործի մէջ, որպէս հոգեբանական փաստ, չունի ոչինչ դորութիւն: Տփլիսու քահանայից մեծ մասը, մինչև այսօր էլ ոչ միայն իւրեանց խօսակցութիւնը, այլ նոյն իսկ Աւետարանը և բոլոր ժամերգութիւնը իրանց վրացացած լեզուին են հպատակեցնում և իրանց համար արդէն ունակութիւն դառած արտաբերութեամբը ծածուկում, և այդ դիտութեամբ չեն անում, ինչպէս շատերին թվում է: Այսպէս ասում են «Հայր միւր վուր իրկինս իս սուրբ իղեցի անուն քու» և այլն: Քահանայք ուղիղ դպրութիւն ունենային ևս, դարձեալ ոչ ինչ նշանակութիւն չ'ը կարող ունենալ մի ամբողջ ժողովրդեան համար, որ չունէր հայերէն դպրութիւն: Այլ

և դպրութիւնը լեզուին, անդական կենդանի հնչմանցն է հպատակում և ոչ դարերով կազմուած հնչմունքը դրպրութեան, որ նոր է ուզում արհեստական կերպով տիրապետել :

Մենք աւելի հզօր փաստեր ունինք մեր երջանկայիշատակ Հանձարի յոյսը լրացնելու, որ ասում է. « այս տարակուսութիւնը, ինչպէս էլ որ լինի վերջ առաջ կը լուծուի յօգուտ Տիխիսու հնչման, յուսոյատելը ամարդութիւն է »: Այո՛, Քո Աստուածային սրբութեամբ և ազդի ջերմ սիրով վառուած հողին թելադրում էր Քեզ ճշմարտութիւնը, բայց որ չկարողացար Քո բուն նպատակին հասնել, ես այդ վերագրում եմ անզութ ցասին, որ Քեզ կաշկանգեց միանգամայն 'ի մեծ վնաս մեր ազգային գրականութեան: ...

Տիխիսու քահանայք փոքր 'ի շատէ շտկում են իրանց դպրութիւնը Արարատի և Գանձակի կողմերից եկած բազմաթիւ դաղթականների շնորհիւ, որոնց մէջ հայկարան քահանաներ կային և համարեա առաջին անգամ հայերէն դպրութիւն դոքա սկսան սորվցնել Տիխիս քաղաքում. դոցա մէջ վերջին ժամանակ երեւելի են եղել Մեծ Տէր Օհան, Փոքր Տէր Օհան և այլք: Եթէ այս բազմաթիւ նորեկները ջոկ մաս չը կազմին, այլ բնիկների հետ խառն բնակէին, այժմ բուն Տիխիսի բարբառով մաքուր խօսող հազիւ թէ գտնուէր: Նորեկները բնակութեամբ հեռու լինելով, գերդաստանական յարաբերութեանց կողմանէ առուել ևս հեռու էին պահում իրանց, չէին կամենում փոխադարձաբար խնամութիւն անել: Բնիկ տիկնայք նորեկ կինարամանների բերանները՝ Հայաստանի վերջին դարուց սոփրութեամբ՝ փաթաթած տեսնելով, նոցա « շան-ճրագո՞ր անուանեցին, նորեկներն էլ նրանց « անամօթ



զիւրջէն: Բայց այս երկու կողմանց իրերատեաց մոլեռան-  
դութեան չափ աւանդապահ ծերերը իրանց նախապաշար-  
մանց հետ դերեզման մտան, ջահել հարսները պառաւ-  
ներից ազատուելով բերանները բաց արին, չխօսկանու-  
թիւնից ձեռք վերցրին, այդ կողմանէ այնքան յառաջա-  
դիմութիւն արին, որ սկսան բնիկ Տփլիսեցու պարկիշտու-  
թիւնից քանի մի քայլ անգամ միւս կողմը ցատկել: Այս  
բնական մրցման օգնութիւն հասաւ քաջին և անմահին  
Ներսէսի հանձարը, որ իւր հայրենակից նորեկներին պաշտ-  
պան հանդիսանալով՝ բոլորովին նուաճեց Տփլիսի հայերի  
վրացականութիւնը: Տփլիսեցիք մինչև Ներսիսի առաջնորդ  
նշանակուելը հայերէն խօսելու սովորութիւն չունէին, ինչ-  
պէս Պոլսեցիք, ուր մինչև հիմի էլ նոյն իսկ քահանայք,  
վարդապետք և Եպիսկոպոսուք անգամ միմեանց հետ  
ճաճկերէն են խօսում և անքաղաքակրթեալ համարում  
մեր ազգային ձանձարին, մեր պաշտելի և սիրելի Խրիստեան  
Հայրի/ին, ըստ որում իրանց պէս խեղկատակ կապիկ բնա-  
ւորութիւն չի ստացել ոչ Փարիզ և ոչ նորա խրտուի-  
լակ Պօլիս...

Բոլոր Տփլիսեցիք առանց բացառութեան վրադետ էին,  
բայց ոչ հայերէն, այլ վրացերէն: Նոյն իսկ նորեկ գաղ-  
թականները հարկադրուած էին վրացերէն գրութիւն սո-  
վորել, որ կարողանան բուն Տփլիսեցոց հետ վաճառակա-  
նական յարաբերութիւն ունենալ: Վրացերէն գրի այսպէս  
հեշտութեամբ տարածուելը հայերի մէջ միայն չէր պատ-  
ճառ, որ գտնվում էին վրաստանումը ու վրաց իշխանու-  
թեան տակ, կարելի է ասել թէ դա բնաւ պատճառ չէ  
անգամ: Այդ պատճառը հետեւեալն էր:

Վրացերէն դպրութիւն չէին սովորում, այլ միայն  
կարգալ գրելու արուեստ և քանի մի առևտրական գործ-

Նախան գրութիւնք և հաշիւներ: Այս կարգալ գրելու ա-  
րուեստը աւարտուլում էր հասակաւորների համար ամե-  
նաշատը վեց ամսում և փոքրերի համար մի տարում:  
Այս արուեստի մէջ չը կար մեր հեղարանի այլ մէ ճե  
ռան ու այլ խէ շան, և որ ամենալատթարն է, չը կար  
մեր զիր-կապի ջինական և Նգիպտական ձևը: Հնչական ե-  
ղնակով ուսուցանելը այս բնութեան որդւոց մէջ մտած  
է դարերից առաջ և ով զիտէ, գուցէ նոյն իսկ մեր  
Մեսրոպի հանձարի ծնունդը լինի կամ մի որևիցէ հայի:  
Այսպէս, նորա չեն ասում զա այբ զա, չա եթ սէ չըս—  
զաչս: Նորա զիր ճանաչելուց յետոյ, իսկոյն սկսում են  
ընթերցանութեան աղօթքը և «Հայր մերը» և իսկոյն զը-  
րիչը տալիս ձեռքը, որ գրէ: Իսկ կարգալը սկսում են այս-  
պէս, քը--ա--րը քար, և ոչ քէ այբ րէ քար, ու—  
փը--ա--ւը--օ. ուփալօ (ողորմած): Մորանից յետոյ սկըս-  
վում էր—ան էրթի, բան օրի... (այբ մէկ, բան երկու) եր-  
գի եղանակով, որ բոլոր աշակերտները միասին ասնէր Գրա-  
մուց քանակութիւնը գրելն անգամ տառերով էին սոր-  
վեցնում դարձեալ ձայնաւոր, էն էրթի փուլի, ին օրի փու-  
լի, կան էրթի բխտի և այլն, այնպէս որ երկխայք փալա-  
խայի և պատժի երես չէին տեսնում, այնքան հեշտու-  
թեամբ էին սովորում: Ուսումնարանների մէջ սարսափելի  
պատիժներ մտցնելու սովորութիւնը վերջին զաղթական-  
ները բերին իրանց հետ:

Երեւակայեցէք այժմ թէ մէկ գրի համար, որ ոչ  
պատիժ լինի, ոչ տաժանելի զիրկապ լինի, ոչ անհասկա-  
նալի ստղմոս ժաւագիրք լինի և այլն և այլն, այլ բոլորովին  
խաղ ու պարով լինին սորվեցնելիս, էլ ի՞նչ պատճառ կը  
մնայ չը սովորելու: Շատերը, որոնք երեսուն քառասուն  
տարեկան էին, ուսումնարան չէին գնում, այլ իրանց ըն-



կերտջեց էին սովորում մի քանի օրում: Նոյն իսկ այն մարդիկը, որ վրացերէն խօսիլ չը գիտէին, նոքա ևս փոխանակ հայերէնի՝ վրացերէն գրերն էին սովորում և իրանց հայերէն մտքը վրաց տառերով գրում: Ինչպէս տեսնում էք, սա մի մեքենական արուեստ էր, սորվեցնելը հեշտացրած և ոչ կրթութիւն կամ դաստիարակութիւն, բայց այնպիսի մի արուեստ, որ չէր կարող ազդեցութիւն չունենալ իւր ազգային հնչիւնների վերայ: Բոլորովին այլ կը լինէր, եթէ ժողովուրդը հայերէն դպրութիւն գիտենար և նոյնը միշտ գործածէր մաքուր կերպով, (ինչպէս որ այժմ արդէն սկսել են), կամ ամենեւին չը սովորէր վրաց լեզուով գրել և վրաց լեզուով խօսել:

Սակայն չը պէտքէ կարծել, թէ այս հանդամանքը տեղիք կը տար անշուշտ ատելու իրանց հայկական դրութիւնը—գրաբարբ: Ո՛չ, գրաբարբ իւր դժուարութեան համար, մի տեսակ մեհենական վեմմութիւն ունէր ժողովրդեան աչքումը, ամենադժուար և անհասանելի մի բան էր թվում: Փոքր ՚ի շատէ գրաբար գրող ու կարդացողը համարվում էր այնպիսի գիտնական, որ գիտէ բոլոր երկինք ու գետինք, մանաւանդ եթէ միշտ կարդար հաստափոր Այսմաուրքը: Մի խօսքով հայկաբաններն այն պատիւն ու յարգն ունէին վրացերէնադէանների աչքումը, ինչ որ Չինաստանցոց համար իրանց Մանդարինները: Արացլեզուն արհամարհանքով են սովորել, համարելով մի թեթեւ հասարակ մահկանացուի լեզու, բայց օգտակար վաճառականութեան համար: Այլ և չը պէտքէ կարծել, թէ ուրեմն վրաց ազգի մէջ ևս ծաւալած կը լինէր իրանց դպրութիւնը: Այդ էլ ոչ: Արացլիք վաճառական և արհեստաւոր դասակարգ չունէին: Բոլոր արհեստները և վաճառականութիւնը Հայերի ձեռքումն էր: Արացիք երկու

դասակարգ ունէին, ճորտեր և ազնուականք: Գրանցից մէկը չէր կարող սովորել, սովորէր էլ ինչո՞ւն պէտքն էր, ինչ ունէր առնելու և տալու, ինքը ոչ ինչ չունէր, ամենայն ինչ իւր տիրոջն էր, իսկ ազնուականաց նոյնպէս պէտք չէր, վաճառական չէին, հողևորական չէին, ուրեմն նոցա մի դասակարգի մէջ միայն կար դպրութիւն, այն է, հողևորականաց մէջ, (ասա էդ էլ չը լինէր): 'Ի հարկէ բացառութիւն կը լինէր, առանց այդ չէր լինիլ, միայն թէ այնպէս մի ընդհանրական պահանջ չէր, ինչպէս Հայերի մէջ: Վրացիք դեռ մինչև այսօր տառերի ձուլարան չունին և չեն ունեցած երբէք: Տպագրութիւն ևս չեն ունեցած մինչև Բուսաց հպատակիլը:

## Բ.

Որպէս զի աւելի շատ գէնք տամ իմ ուսումնասէր ընթերցողի ձեռքը, պէտքէ ասեմ, որ բարբառի փոփոխուիլը մի մեծ բան չէ ազգաց պատմական կեանքի մէջ և ոչ էլ երկար ժամանակի կարօտ: Ես իմ աչքովս տեսել եմ. (պէտքէ զիտնաք, որ ես էլ բաւական տեղ պըտըտած եմ, և այն ոչ կոյր զկուրայն), Վրաստանի զիւղերում Ղարաբաղցի դաղթականներ, (ասումեմ Ղարաբաղցի. ըստ որում ես չը գիտեմ ոչ մի ցեղ հայերի մէջ, որ դուրս պէս ոււանդապահ լինի): Ղարաբաղից եկած ծերունիք խօսում են մաքուր Ղարաբաղի բարբառով, բայց նոցա թոռները երկու բառ չէին կարողանում խօսել հայերէն, և ասածդ էլ բոլորը լաւ չէին իմանում: Ահա այդչափ կարճ ժամանակում կարողանում է փոխուիլ լեզուն: Հայրը պահպանում է ցմահ, որդին աղաւաղում է, թոռը տկարանում է, ծուռը բոլորովին կորցնում է: Սակայն ոչ այն-



այլս, որ հողերան լեզուասերից թաքչին, թէ սա բնական  
Վրացի չէ կամ ճաճիկ չէ: Ես Բաթումցի տաճիկներ շատ  
եմ տեսել, որոնք ոչ միայն կերպարանքով և կազմուած-  
քով բոլորովին Վրացու նման են, այլ նոյն խակ ճաճ կերէ-  
նի շեշտերից, արտասանու թիւնից, տառաւորութիւնից ե-  
րևում է, որ սա հաստատ Վրացի է, բայց որ Վրացի չենք  
ասում այդ միայն նորա համար, որ թէ կրօնն է կորցրել և  
թէ լեզուն\*: Այսպէս են ահա և Աեսարիոյ և այլ տեղերի  
տաճ կախօս Հայերք: Մի Հայ ամիրա (թող լինի նա Պօլ-  
սոյ ծնունդ) որքան էլ մաքուր, որքան էլ վախուկ խօսի  
տաճ կերէն, չի կարող նոյն լինիլ, ինչ որ խօսում է տա-  
ճիկ ցեղի ամիրան: Ուրիմն այս գրուածի մէջ ես ոչ մի  
բան չեմ ննթաղրել՝ բացի մի ծանօթութիւնից, որի մա-  
սին ահա ինչ կասեմ: Մենք պատմութիւն չունինք այս  
բանի բուն նշանակութեամբ: Աթէ մեր բոլոր պատմու-  
թիւնքը ժողովնք մի տեղ և այրենք, իմ կարծիքով ոչ  
մի կորուստ չենք ունենալ: Ներկայ դարուս զխտութեան  
պահանջներին համապատասխան չեն դրանք, մեր փնտրած  
նիւթը չեն տալիս: Ես իմենթաղրութիւնը աւելի ուղիղ կը  
համարեմ, քան թէ մի որեւիցէ պատմութեան մէջ տը-  
պուած փաստ, որ շատ անգամ ոչ ինչ բնական հիմք  
չունի և սուտ է ըստ ամենայնի: Համարենք, որ այս ծայ-  
րահեղութիւն է. և յիրաւի, դեռ ևս վաղ է այսպէս բան  
ասելը, առաջ պէտքէ նորը շինել, յետոյ հինը քանդել՝  
մենք ոչինչ չը յնաժամ ամեն բան քանդում ենք, սա թէ  
անմտութիւն և թէ յիմարութիւն է: Ես բոլորովին հա-  
մաձայն եմ: Ես մեղայ Աստուծոյ: Բայց դուք պատասխա-

\* Ճաճիկները գիտեն, որ սոքա բուն ճաճիկ չեն, այլ տաճ-  
կացած Վրացիք, որոնք անուանուում են Վարչ:

նեցէք ինձ այժմ: Ահա քանի տարի է, որ Պօլսոյ մէջ ընդդէմ, ամնագրեր և այլ և այլ հրատարակութիւններ են լինում, բայց կարող էք արդեօք դրանց էջէրկց տաճկական Հայաստանի դրութեան մասին մի որ և է հասկացողութիւն կազմել: Քանի՞ տարի է, որ մենք իմացանք թէ աշխարհիս երեսին Զէյթունցիք կան, բայց հիմի լինի, ո՞վ գիտէք, Զէյթունցիք ի՞նչպէս են խօսում: Ո՞վ էք լսած, քանի՞ բարբառներ կան տաճկական Հայաստանում և ի՞նչպիսիք են դոքա. Մեր խնկելի խորհնացին զանազան անուններ է տալիս Մոկաց ինն գաւառին, որպիսիք են Իշայր, Միւս Իշայր, Իշոց գաւառ և այլն: Ո՞վ գիտէք, այս էշերը արդեօք գեռ ևս կենդանի՞ են, և եթէ՛ կենդանի են, իշալարի են խօսում, թէ՛ մարգավարի: Մենք ինչ կիմանայինք թէ Ղարաբաղու ձորերումը, ինչպէս են խօսում և ինչ տեսակ մարդիք են, եթե Փրէյդումը չը գրէր Մշակի միջ նրանց լեզուով մի բան և չերեցնէր, որ այս մարդիքը կրթութեան կողմանէ էլ այնպէս են որ-«Առջը վար առչա օղբ՝ չի Տղըրկեցէ տառնայ, էսը գեօրա զիդա, թա մեր հայը հինչա», որ ուզում է ասել թէ Արջը որ արջէ, չի կամենում Ղիզակեցի դառնալ. սորանից կարող ես իմանալ, թէ մենք ինչ դրութեան մէջ ենք: Քանի՞ քանի՞ Ղիզակներ կան այս բոպէկիս կորդուաց լեռների ստորոտներումը, Տաւրոսի փեշերի տակ, Ալիս գետի ափերումը Ասորուց միջագետքում, Իշաստանի համար արդէն ասացի:

Հիմի որ փառք Աստուծոյ, երբեմնապէս լաւ լաւ բաներ շատ ենք տպում, մինչև անգամ զիտենք թէ Չինաստանի թաղաւորը ինչ է մտածում, Բիսմարկը որ ժամին վերկացաւ տեղիցը, Մասիսի միջ մի սուտ լուր է հաղորդուել և միւսն էլ նորան ցրել է, լաւ լաւ կոխներ զալ մաղախներ... հիմի որ այսքան իմաստուն ենք, դեռ էլի ոչ ինչ



չը գիտենք մեր աշխարհքի մասին, ուրեմն ինչ կը լինէր հին ժամանակը: Հիմի քիչ գրողներ կան, որ կատարեալ որոգ են, միթէ այդպիսի պատմութեան դրօշներ քիչ կային և հին ժամանակը: Նոքա դրում են. այսքան կոտորեցին, այսքան ջարդեցին, այսքան զերի բերին, այս ինչ տեղ բնակեցին և այլն: Ո՞ւմ հոգն էր մի անդամ էլ ասել, թէ այս ինչ մարդիքը, այս ինչ ժամանակից այսինչ պատճառով են եկած Հայաստան, այսքան տարի է սոցա զայլը, սոքա եկած ժամանակը այսպէս են եղել խօսելիս, իսկ հիմի այսպէս են խօսում: Ի՞նչպէս են խօսում”, գրարար կարելի էր արդեօք պատմել թէ ինչպէս են խօսում...

## Գ.

Ղարաբաղի բարբառի մէջ հետեւեալ տառերը Բ, Գ, Դ, և Տ այնքան նրբացել են, և տեղացւոյն միայն կարելի դառել հնչելը, որ կարող ենք ասել թէ կորել են բուլորովն \*:

Արարատեան բարբառից ոչ մի հնչիւն չը կայ կորած և շիրտուած: Քանաքեռցիք, Սշակահեցիք, Աշտարակեցիք և այլ շատ զիւղերում բոլորովն այնպէս են խօսում,

\* Թէև միտք չունիմ այժմ Ղարաբաղու բարբառի մասին մի ընդարձակ տեղեկութիւն տալ, բայց մի համառօտ նկատմունք անկն անհրաժեշտ եմ համարում: Ղարաբաղու բարբառ ասելով պէտք չէ հասկանալ Շուշեցոյ խօսուածքը, որ չէ ընդհանուր քաղաքացոյ համար մի կանոնաւոր բարբառ, այլ անհատական: Ղարաբաղը (չը հաշուելով Շուշի քաղաքը) ունի հինգ զլխաւոր գաւառ: Այդ հնգեքին գաւառներին մէջ միակերպ չեն խօսում, դոցա միմեանց մէջ եղած տարբերութիւնը շատ մեծ չէ բայց այնքան էլ քիչ չէ, որ խօսելու ժամանակ իսկոցն չը նշմարուին, թէ որը սր զիւղից կամ գաւառից պէտք է լինի:

ինչպէս Տփիսխումը Հաւաքեցիք, Տփիսխու մօտիկ զիւղերից Գուռնիկեցիք, Շամշուրեցիք: Կան բառեր, որոնց մէջ այս և այն տառը փափուկ է հնչվում և այդ շատ բնական է ամեն ազգային լեզուաց մէջ: Այս բառական յատ-

Այս է աճա պատճառը, որ Ղարաբաղու բարբառով զըրուածներէ մէջ ևս միանմանութիւն չը կայ: Այս չ'նմանութիւնը բառերի և դարձուածքների մէջ է, բայց հնչմանց վերաբերութեամբ չը կայ ոչ ինչ տարբերութիւն: Այս բարբառը ունի բութակ ձայնաւորներ, որոնք չը կան Արարատեան և Տփիսխու բարբառների մէջ, բայց կան բոլոր միւս բարբառներում, առաւելապէս Պարսկահայոց: Առանց այդ բարակ ձայնաւորներին չի կարելի այս բարբառները մեր ունեցած ձայնաւորներով այնպէս գրել, որ ընթերցողը կարողանայ կարգալ ըստ ժողովրդական հնչման և արտասանութեան: Այդ ձայնաւորը կարելի է կարգաւորել հետևեալ կերպով:

Հատ	Բարակ
Ա	ային պարսից
Է	իւ (միացած)
Ը	եր (միացած)
Օ	էօ (միացած կամ դաղղ. eu)
ՈՒ	իու (միացած կամ դաղղ. u)

Բարակ ձայնաւորները բարակացնում են և իրանց մօտ և դած բաղաձայնները և այդպէսով այլ և այլ նշանակութիւն տալիս նոցա: Ասում են պէլ (ԱՅԼԵ), որ կը նշանակէ դիժ, իսէնդ, և սիւլ (ԱՅԼԵ), որ կը նշանակէ կնքահայր, ծօր—մեղրի ծօր, և ծըօր—ծօր: Ո տառը բառերի սկզբում չի հնչվում որպէս վօ, այլ որպէս վէ: Օրինակ փոխանակ ասելու որդի, ոտն, որ, ոսպ, ասում են վերթի, վէնը, վէր, վէսպ, վէսկէ, (ոսկի) վէչ (ոչ) ևայլն: Ղարաբաղու բարբառի վերայ ազդող օտար լեզուն եղել է պարսիցը:



կոթիւնները թէ Տփլիսի և թէ Արարատեան ժողովրդեան մէջ բոլորովին նոյն է, միայն ահա ինչ կայ: Տփլիսեցին հայերէն կարդալիս, բայց ոչ խօսելիս, չի կամենում այս և այն տառը փոփոխոյնել: Այսպէս, մենք ամենայն

Պարսկական հնչիւնների մէջ չը կան, պ, կ, տ, ծ, ց, ծ, և այս պատճառով Ղարաբաղու բարբառի մէջ չը կայ ոչ մի օտար բառ այդ հնչիւններով: ք, դ, ղ, և ջ տառերով միայն օտար բառերն է հնչելում, բայց և թէ բառը հայերէն է, այն ժամանակ այդ տառերը փոխվում են իրանց համապատասխանող միջակ տառերին, այսինքն դառնում են պ, կ, տ, ց: Իսկ ծ տառը փոխվում է ծ: Այդ տառը հնչվում է հայկական բառերի մէջ միայն, բայց ն տառից յետոյ: Օրինակ—

բ==պ

պ==պ

բարի	պարի	պաս	պաս
բոյն	պիուն	պահել	պահել
բեր	պիր	Պօղոս	Պօղոս
բհիր	պհիր	պաշար	պաշար
բերան	պերան	պանիր	պանիր
բաժակ	պէժակ		
սուրբթ	պիուրթ		

Օտար բառեր

Օտար բառեր

բալքեամ	գուցէ	դալդա	հովանի
բողաղ	բուկ	դարաղ	կաշեղործ
բէգալ	փոխանակ	դանա	հորթ
բիրզան	միանգամայն	դիուղ	հարթ
բարաբար	հաւասար	դիուշման	թշնամի
բարութ	վառօղ	դարդ	հողս

պ==կ

ծ==ծ

գարի	կերարի	ձայն	ճին
------	--------	------	-----

տեղ ասում ենք-ախպէր, Տիխիսեցին նոյնպէս ասում է  
 ախպէր: Գրած ժամանակ Արարատցին կարդում է եխպայր  
 Տիխիսեցին կարդում է եղբայր աղբիւր առանց փափկա-  
 ցնելու դ և բ տառերը: Տիխիսեցին ասում է վուր<sup>ն</sup>, Արա-

գայլ	կիւլ	ձոր	ճըօր
գոզ.	կեօշ	ձաք	ճեաք
գոմէշ	կիւմաշ	ձեր	ճեր
գազար	կիեզար	ձեզ	ճէզ
գալուստ	կեալուստ		

ծ==ծ

կ==կ

		ճարաւ	ճարաւ
կով	կով	ճիրան	ճէրան
կոթ	կոթ	ճներեկ	ճներվակ
կուժ	կօժ	ճակ	ճակ
կացին	կացէն	ճոմ	ճոմ
		ճամ	ճամ

Պտար բառեր

(ն տառից յետոյ ծ)

զեօշ	չիակ		
զեազա	ճառայ	ինձ	ինձ
զեառ	մեծախօս	բրինձ	պրինձ
զեօռ	թուրքի գերեզ.	սանձ	տանձ
		խնձոր	խնձոր
		թանձր	թանձր
զանակ	տէնակ	հունձ	հօնձ
զմակ	տմակ	ճնձաղիկ	խնձաղա

դ==տ

զող	տրօղ		
զարման	տէրման		
զարվին	տէրվիուն	ջուր	ճիուր

ջ==ճ



բատնային որթի, զբաժի մէջ Արարատցին իւր հնչման ուղ-  
ղութիւնն է պահում, իսկ Տփլիսեցին փոխում է և ա-  
սում է որդի, այնպէս որ դ մէջ տեղը զնկում է: Այս  
կողմանէ ուղիղ հնչելու ուղիղ չէ, այլ սխալ հնչելն է ուղիղ, և

	ա==ա	Չորի	Ճորի
		Չոկ	Ճոկ
տակ	տակ	Չաղաց	Ճաղաց
տարի	տարէ	Չերմ	Ճերմ
տասը	տասը		Ճ==Ճ
տանել	տանել		
տուն	տոն	Ճրագ	Ճրաք
տորոն	տուրուն	Ճետ	Ճետտ
		Ճիւղ	Ճողնր
		Ճումն	Ճումնր

Օտար բառեր

Չափա	աշխատանք
Չառման	տուգանք
Չուր	գրպան
Չողաք	պետասխանի
Չահիլ	նորահարս
Չարդ	շարք

Այս Ձ տառով բազմաթիւ օտար բառեր պէտք է լինին  
Ղարաբաղի բարբառի մէջ, ըստ որում ես իմ յիշողութեան թե-  
լադրութեամբ մէկ անգամից անընդհատ գրեցի մօտ երկու հա-  
րիւր բառ: Ես ասացի, որ Ղարաբաղի բարբառի վերայ ազդող  
տարրը եղել է պարսիցը, սակայն չը պէտք է մոռանալ, որ ա-  
ղուանից լեզուն նոյնպէս դառել է այդ բարբառի բազաղրական  
մասներից մինը: Բայց ո՞վ գիտէ, Աղուանից լեզուն մի առան-  
ձին լեզու էր, թէ հայկական բազմաձիւղ բարբառներից մինը:  
Ահա մէկ նոր տարակուսութեան աղբիւր, որ ես հարկաւոր եմ  
համարում առաջարկել մեր լեզուագէտներին և ուսումնասէրնե-  
րին լուծելու:

ասել է Արարացունն է ուղիւր: Տառերը ունին իրանց բնական հնչմունքը ընդհանուր առմամբ և իրանց շեղմունքը այս և այն բառի մէջ: Տփխիսի հայերէն գրագէտը յիմարութեամբ չէ շեղվում և ոչ թէ վիտուճեամբ (կարգալուծամանակ) որ շատ բառեր ականջ են ծակում, ինչպէս են եղբայրը և աղբիւրը: Աւստի պէտք եմ համարում ասել, որ մեր մայր Աթոռի մէջ մինչև այսօր անարատ են մնացել հայկական հնչիւնները զպրութեան և խօսակցութեան մէջ, միայն Մաթէոս Աթողիկոսի օրից սխեւալ և իտասարգ արեղանները իրանց մեծերին դուր գալու համար սխում են ծռմունկել կարդացուածքը և խօսուածքը: Շատերը մինչև անդամ չեն կամենում Արարատեան բարբառով զրել: Արծես մեր հոգևոր հայերին բնական է դառնել իւրեանց հոգւոյ և մտաց թելադրութեանը չը լնլը: «Ղէ որ ինչ յիմարութիւն է առաջի մարդկան, իմաստութիւն է առաջի Աստուծոյ. ասէ Անտօն Ճգնաւոր 'ի Հարանց վարս»: Այս է ահա զրանց բնաբանը իւրեանց բոլոր զօրծողութեանց մէջ:

## Գ.

Արարատեան բարբառը Ղարաբաղու բարբառի հետ համեմատելով նոյն է, ինչ որ Աթենացոց լեզուն Սպարտացոց լեզուի հետ: Ղարաբաղի բարբառի մէջ աիրում է սաստիկ Ղակոնական ձև, այս է նորա ողին և կենդանութիւնը\*: Եթէ այսպէս չը լննէր, Ղարաբաղի բարբառը

\* Սորա վերայ պէտք է աւելացնել նաև այն հանդամանքը առաւելապէս, ինչոր նախընթաց ծանօթութեանս մէջ յիշեցի, այն է պակասութիւնը բարակ ձայնաւորների, որ համարեա չլթայակապ է անում զրոզի ձևւոքը և չի թայլ տալիս նորան իւր զգացմունքը ազատ կերպով յայտնելու:



նոյնպէս կունենար իւր անմահ Աբովեանը, վասն զի քաջու-  
թեան կողմանէ պահասութիւն չը կայ, հերոսների թիւը  
չափազանց շատ են, որոնց փոքրը մեծ է քան թէ Աղա-  
սին: Լեզուն է, որ տաղանդ է ծնում՝ զրահանական և ոչ  
տաղանդը լեզու: Եթէ Աբովեանը չը լինէր Քանաքեռի ծը-  
նունդ, նրանց մէջ մեծացած, նրանց մէջ սնած, նրանց ցա-  
ւովը ցաւած, նրանց ուրախութեան հետ ուրախացած, ոչ  
մի Գորպատ նորան չէր կարող այդ անմահութիւնը պար-  
զեւել, այդ կրակոտ լեզուն նորա կրակոտ սրտին տալ:

Աբովեանը գրեց իւր «Վերք Հայաստանին» ոչ թէ  
նորա համար որ մի բան գրած լինի, որ անուն ստանայ,  
այլ նորա համար որ չէր կարող չը գրել, նորա սիրտը ցա-  
ւում էր, նորա լացը զալիս էր, պէտքէ լար, որ հանդրա-  
տանար իւր սիրտը: Բայց ո՞վ էր աուել նորան այս զգա-  
ցումը, այս լեզուն—ժողովուրդը: Նա յետ դարձրեց ժողո-  
վորդին նրանից ստացած տաղանդը աւելի շահեցրած, որ-  
պէս հաւատարիմ և ազնիւ ու հարազատ գաւակ իւր  
սիրուն հայրենեաց—«Ով թուր ունի, առաջ իմ զլիսիս  
խիի, իմ սիրտս խրի, ապա թէ ոչ քանի բերնումս լեզու  
կայ, փորումս սիրտ, ես լեզապատառ ձէն կտամ. էդ ո՞ւմ  
վրայ էք թուր հանել, Հայոց մեծ աղբին չէք ճանա-  
չում...» (Երես 11):

«Օրորոցի վրայ մեր լեզուով մեզ նանիկ ասեցին, էն  
էլայ մեր միտքը չի՞ պէտքէ բնկնի» (Երես 91):

«Ինչ կուղէ Ֆրանցուզերէն, նիմեցերէն զխանանք,  
մենք չենք կարող էնպէս բան գրել, որ նրանց միջումն  
անուն ունենայ, չունքի նրանց միտքը, նրանց սիրտը ուրիշ ա,  
մերն ուրիշ...» (Երես 93)

Ահա այս ատերից զգացող և անարատ Հոգի ու-  
նեցող մարդը կարող է տեսնել, որ մի գրուածք այն ժա-

մանակը կարող է կենդանի լինել, երբ հողոյ թելադրու-  
թեամբն է գրուած: Յիշողութեան օգնութեամբ այս և այն  
բառը բերն նայելով, սորանից նորանից գողացած մտքեր մի  
տեղ բերելով՝ կարող էք մի շինուածք կառուցանել. դու-  
ցէ և հոյակապ, բայց աւերակ բոլորովին, ուր չկայ և ոչ  
մի հողի: Հողին ժողովրդի սեպհականութիւնն է, նա հեշ-  
տութեամբ և ձրի չէ պարզուում ոչ դքի, որպէս մի կեղծ  
վկայական: Հանձարներէից էլ հանձար Անգղիացի Շէքս-  
պիրը կարող էր արդեօք գերմաներէն դիտենալով Շիլլեր  
գառնալ, այդպէս որ լինէր մեր Պօլսեցիք այժմ մի-մի  
վօլթեր կը լինէին, մինչդեռ այժմ նորա կապիկներն են...

Ղարաբաղու. ոճը միայն զարաբաղցին կմբռնէ ինչ-  
պէս պէտքէ: Ղարաբաղցին շատ անգամ չի էլ խօսում,  
մի զլտի շարժումով, ձեռքի կամ ոտքի ցուցմամբ է յայտ-  
նում իւր միտքը, և այն շատ ընդարձակ միտք, տեսնողն  
արդէն զլտի է ընկնում, թէ ինչ է ուզում ասել: Շատ  
անգամ մի բառ կասէ միայն կամ միջարկութիւն և դո-  
բանով մի ամբողջ պարբերութիւն կը հասկացնէ: Արաղ  
և ճարտար խօսիլ չունի Աշտարակցու պէս\*, մի քանի բառ  
կասէ ծանր ու բարակ, այն էլ վերջին վանկերը թողնե-  
լով: Երեխայական խաղերի մէջ կան այնպիսի խաղեր, ու-

---

\* Ով չի լսել այն առակը, որ ասում են մի Աշտարակցի մի  
Լոռեցու հետ չի ուզել զգալ-փոխ մածուն ուտել, պայման է ա-  
ւաջարկել թէ ով որ շուտ-շուտ օխտը գեղի անուն կը տայ՝ զը-  
գալը նրան բլի: Ասում են մինչև Լոռեցին կասէր Հլէ լօռի. . .  
Հլէ ուզունար... Աշտարակցին իսկոյն վրայ է տալիս շուտ-շուտ  
Ուշի—Օշական—Կարբի—Բիրական—Թայլին —Թայլի—Մաստա-  
բա, զգալի կոթը դէսն արա...չը նայելով այս առակին պէտք է  
ասել, որ յիրաւի Աշտարակցիք սաստիկ արագախօս և ճար-  
տար են...



րոնք չխօսեցնենք են զարդացնում: Այսպէս շատ անգամ  
խմբով հաւաքվում են երեխայք, պայման են անում, որ  
չը պիտի խօսեն միմեանց հետ և ով որ առաջ խօսի,  
նորան այս ինչքան զարկ պիտի տան: Բոլորն էլ միա-  
բերեան ասում են \* — Թնւ կրկում, և լուում են, շատ  
անգամ ամբողջ ժամով, բայց ոչ անշարժ, ընդհակառակն  
ծաղրական շարժմունքներ են անում, որ զօռով խօսե-  
ցնեն և ծիծաղացնեն, որ ձայները դուրս գայ ու մի լու-  
ծեծեն: Այս խաղը մի աննշան բան չէ, ինչպէս և ոչ մի  
այլ խաղ: Հարսների մէջ չխօսկանութիւնը Արարա-  
ցոց պէս թեթեւ չէ, իմ հարսը (եղբօրս կինը) որ քսան  
տարի է մեր տանն է դեռ ևս ինձ հետ չի խօսեցած:  
Մեղանում հարսները մեռնելու ժամանակ միայն իրաւունք  
են ստանում մեծերի հետ խօսելու\*։ Ընդհանրապէս ասե-  
լով մեր բարբառներէց, բացի Արարատեանէց, ոչ մինը չի  
կարող մի զարդացած մարդու հանձարի համար օրինա-  
ւոր ծնւ դառնալ: Գոքա կարող են ժողովրդական մանրիկ  
բանաստեղծիկներ դուրս բերել, բայց ոչ ընդհանուր պշ-  
ղային մի վերասան, որ կարող է սալ միայն մեր այժ-  
մեան զրահանական բարբառը Արարատեան բարբառի օգ-

\* Զը պէտքէ կարծել, որ այս մի տեսակ ճնշումն է և  
բարբառասկան ստիպմունք: Գուցէ սկզբումն այդպէս լինի և-  
գած, բայց հիմի այդ հանգամանքը դառել է մի տեսակ հոգե-  
կան պարծանք և մխիթարութիւն: Իմ հարսի համար մեծ մխի-  
թարութիւն է, որ չի խօսում ինձ հետ, որպէս ինձ չափազանց  
սիրած և պատուած: Այսպէս ահա փախելը, բերանը փաթա-  
թելը չխօսկան կենալը մեր կանանց միակ պարծանքն է: Մեծ  
անպատիւթիւն են համարում, կրբ որ ասում ևս, այդ յիմար  
բան է մի անէք: Տղամարդիք ոչ թէ ստիպմամբ բերանները փա-  
թաթիլ են տալիս, այլ ստիպմամբ բաց են անում և այդ էլ շատ  
քչերն են յաջողում: Բայց ճշմարիտն ասել զբանց բերանը բե-

նութեամբ, և ոչ երբէք Պօլսոյ լեզուն: Պօլսոյ լեզուով ոտմաններ թարգամանել կարելի է, բայց ազգային վիպասան լինել չի կարելի, պատճառ, վիպիսանին հարկաւոր է կենդանի լեզու, հողի, և ոչ մի մեքենական հողի ու միաքշիթայող արհեստական բառաշարութիւն...

Մեր լեզուն կը ծաղկի  
Մեր լեզուն կը ձօխանայ,  
Երբ մեր աղջկունք մեր սիրուն հարսունք  
կը սորվին կարգալ, կը սորվին խօսել  
Մաքուր Հայերէն ազգային լեզուն.  
Երբ մեր պատանիք զարգացած կրթուած  
Հարսունք և վեսայք ձեռք ձեռքի սուած  
կը խօսեն քաղցրիկ մայրենի լեզուով,  
Յայնժամ կունենանք մենք լաւ բանաստեղծ  
և լաւ վիպասան.  
Երբ մեր քահանայք և մեր վարդապետք  
կը սորվին մաքուր հայերէն խօսիլ,  
Երբ մեր հնամուլ զգում ուսուցիչք  
Վիմանան կրթիւ և դաստիարակել,

---

բան չէ այլ ըսիս է, լաւ է որ բնաւ բաց չանեն: Երբ որ սիրով խօսել, մարդաւորի և քաղաքավարութեամբ միմեանց հետ կառավարուիլ չունին, լաւ կը լինի, որ միշտ փակ պահեն բերանները: Երկուսից մէկը պէտքէ ընտրել—կամ կանոնաւոր դարգացում և դաստիարակութիւն և ազգա ազատութիւն և կամ նահապետական կոյր հնազանդութիւն: Զարգացում չեղած տեղք ազատութիւնը տանելի բան չէ ընտանեկան կեանքի մէջ, բայց աւելի սարսափելիին թերուս և հակազգային կրթութիւն ստացած իմաստակ օրիորդներն ու պատանիքն են, որոնք կատարեալ ցեցեր են ընտանեկան կեանքի մէջ և ծնողաց սիլտը մաշող:



Յայնժամ կունենան, խելօք մտածող  
Լւր ազդի ցաւը, կարիքն իմացող:

## Ե.

Քա՛թ, քա՛թ, մին չուալ ցակատ,  
Վէ՛չ կօթ օնէ, վէ՛չ արկաթ:

(Էս հի՞նչն ա):

Արբազան Այվազեանը մի տետրակ է հրատարակել 1869 թուականին այսպիսի վերնագրով — «Ուղղազրու-  
թիւն լեզուիս Հայոց. յօրինեաց 'ի պէտս Աղղային Վարժարա-  
նաց Գաբրիէլ Եպիսկոպոս Այվազեան»:

Ես զարմանում եմ, որ մեր դիւանականք այս մասին ոչինչ չը խօսեցին: Չի կարելի բանի տեղ չը դնել Արբա-  
զան Այվազեանի պէս անսխալ հեղինակութիւն ստացած  
մի բանասերի գրուածք, մանաւանդ երբ այդ գրուածքն է  
'ի պէտս Աղղային Վարժարանաց: Մի՞թէ այսչափ թեթեւնշա-  
նակութիւն ունին մեր դիւանականաց աւքումը մեր Աղղային  
ասուած վարժարանները:

Միտ չը դարձնելով այս աշխատութեան մէջ մեր  
հնչիւնները այլ լեզուաց հնչիւնների հետ համեմատելը,  
ես մի հասարակ փաստով կը քանդեմ նորա բոլոր շե-  
նուածքը:

Արբազանը երկար բարակ սիմ—սիմ անելուց յետոյ  
ասում է Միմաւօն և դորս Միմաւօնն այս է—

Թէ Պօլոյ և թէ Տփլիսի հնչմունքները և թէ նախ-  
նեաց տառադարձութեան հետեւը համարում է սխալ, իսկ  
Միջերկրիաց Հայոցը, այն է Արարատցոցը ուղիւ: Բայց  
տեսնենք ինչպէս է հասկանում Արբազանը Արարատեան

հնչումները: Ահա ապիկ նորա բերած օրինակներից մինը, որ  
ցոյց տայ, թէ ո՞րք ինչպէս են հնչում:

“**Ուուս**” ПОСТОЙ...ТЕОБЪ ВОЗВРАТА НѢТЬ

Ըստ տառադարձութեան նախնեաց և ըստ այժմու  
հիւսիսայնոց (Տվխիսեցոց)

Պաստոյ...տերէ վողվրատայ նեա,

Ըստ սովորական հնչման միջերկրեաց Հայոց (Արա-  
րատցոց)

Փասթոյ թէպէ վողվրատայ նե<sup>Յ</sup>

Ինչն է արդեօք սովախիլ Վրբազանին այս անհեթեթ  
սխալման մէջն ընկնել և Արարատցոց հնչիւնները խրիմե-  
ցոց հնչիւններին յարմարացնել: Այս բուպէիս կասեմ այդ:  
Սրբազանը այդ տեսութիւնը հիմնել է մեր երեւելի և ազ-  
գապարճանք Հանձարի, այն է երջանեկա յիշատակ Աբով-  
եանցի այն մի քանի բառերի վերայ, որ նա զրել է Նոր  
Նախջիւղանցոց և առ հասարակ խրիմեցոց ծաղրելու համար,  
յարմարացնելով իւր տառադարձութիւնը նոցա հնչմանց և  
ոչ իւր կամ մեր:

Տեսէք ահա մեր գիտնական Սրբազանը ինչպէս է բե-  
րում այդ օրինակը:

“Նոյն երեւանցի հեղինակն՝ Խաչատուր Աբովեան, որ  
ուուսերէն քաջ ևս գիտէր, անս ինչպէս հասկըցած էր,  
թէ տառադարձութեան կանոնը չյարմարիր այժմու լե-  
զուաց խօսքերը հայերէնի փոխաբերելու համար, թէպէտ  
և նորա տառադարձութեանը մէջ ալ միակերպութիւն և  
կանոնաւորութիւն չերեւեր\* այս հատուածիս մէջ — “Ախր  
որ ասում ես փրաբուլիվամաս արի, սրուչնայ եմ”, օվի-

\* Աբովեանցը գրել է փրօբուլիվամաս, քրուժիմաս, իսկ  
Սրբազանը այդ միևնոյնը ինքը սխալմամբ գրել է փրօբուլի-  
վաթաս, քրուժիդաս, յետոյ իւր սխալից եզրափակել, թէ կանո-



ժաթսայ էլայ, փրօշնի տուի... Եւ յի օտար բառերը եթէ Արցախեցին մէջ բերէր կամ Զուղայեցին անշուշտ նախնեաց տառադարձութեան հաւատարիմ մնալով պիտի զբերէր այնպէս—արօզուլիստա, սիուչնայ, օրիժասայ, արօշնի... և ահա յայտնի է, թէ որքան ևս առաւել կայլանդակեր խօսքերը եւ անիմանալի կնէր թէ Հայուն եւ թէ Ռուսին»:

Ահա այս փաստով ուզում է ցոյց տալ, որ Զուղայեցու տեսութիւնը սխալ է, նախնեաց տառադարձութեանը հետեւելը ուղիղ չէ, այլ Աբովեանցի զրաճն է ուղիղ, ուրեմն և Արարատցոցը և սորանով է կամենում ամբողջութեան տալ իւր անկանգնելի և խախտու շինուածքին:

Ահա այս է նորա շինուածքի հիմքը և բուն շինութիւնը, որի խնդիրը կը լինի հետեւեալ կերպով: Արբազան Հայր: Նթէ ես ուզենայի Ձեր հնչմամբ և արտասանութեամբ մի բան գրել, որ մերօրեայ կարգային բոլորովին այնպէս, ինչպէս դուք արտասանում էք և հնչում, անշուշտ պիտի ասէի.—մեր Արբազան Հայրը ասում է քօփեր պոխանակ ասելու կօպէկ, մեր Արբազանը գրում է Քեթրփուրք, փոխանակ գրելու Պետերբուրգ: Այժմ չեմ ասիլ այսպէս գրելու փոխանակ այնպէս է գրում, այլ կասեմ «Ախր որ ասում ես քօփերք, փեթրփուրք և այլն: Ուրեմն իմ ասածը այս վերջին ձևի մէջ միայն տեսնելով՝ պիտի ասէք Աղայեանցը որպէս ներկայացուցիչ Արարատեան բարբառի աւելի ուղիղ է գրում, ըստորում գրում է Փեթրփուրք և ոչ Պետերբուրգ, ինչպէս Զուղայեցին է գրում

---

Նաւաստրութիւն չերևեր: Օրհնուած մէկ լաւ կնայելիք բնագրին, ինչպէս ես չը հաւատարիմ Ձեր ստղծին, նայեցայ բնագրին և համոզուեցայ, որ ճշմարիտ է եղել իմ բնագրումս:

քստ նախնեաց տառադարձութեան\*։ Կամ թէ չէ, ես որ մի վիպասանութեան մէջ ուզեցած լինիմ մի Կաթողիկ ճիրակացու խօսուածքը մեր հնչմամբ դրել — «Ձ՛՛ ուրդից գուքաս դը, ձ՛՛ ուր դերթաս դը...սորանից ուրեմն էլ պիտի եզրակացնէք թէ Աղայեանցը ուղիղ հայերէն դրել չը դիտէ՞։ Ուրեմն գուք այդպէ՞ս էք ուսումնասիրել Վէրք Հաստանին Արովեանցի Վայ նորան...

Ալ չէիք անել արդեօք, որ նորա սեփական տառադարձութեան մասին ճշմարիտ հասկացողութիւն կազմելու համար, նորա թուրքերէն գրածի վերայ հիմնուէիք, որ նոյնպէս բերած էք որպէս օրինակ — «Սասն քեանս, վերջանն, իմամ ուշողի, սանն նա հազդն վար, քի ուզն բղան՝ զեօնդարիը սան...դո՛ւրն, դո՛ւրն զեզախ»։ Այս սլախալ էք համարել գուք, իսկ ռուսերէիը ուղիղ։ Ինչո՞ւ արդեօք, երբևի սա ձեր տեսութեանը ձեռնտու չի եղել, ըստորում փոխանակ ճշմարիտ ղիսնականի պէս առանց կանխակալ կարծիքների ուսումնասիրելու Ձեր յանձնառած նիւթը, առաջուց որոշել էք, թէ ես պիտի աշխատեմ հաստատուել, որ բողոքեանք սուտ են, միայն ես եմ ճշմարիտ, միայն ես ղիտեմ, թէ որն է Արարատեան բուն

---

\* Ես ոչինչ չէի խօսիլ Արքադանի այս նոր աշխատութեան վերայ և պատուելով իւր բազմահատոր աշխատութիւնքը, ներողամիտ աչքով կը նայէի նորա այս մեծ սխալի վերայ, սակայն նա որ իրան թող է տալիս ասելու, որ մեր Կաթողիկաց տառադարձութեանը հետեւիը սխալ է, գորանալ արդէն իրաւունք է տալիս ինձ ակններ կացուցանելու իւր իսկ շօշափելի սխալները։ Եւ չէի էլ կարող լուի այս մասին, քանի որ այս միակ միջոցն է մուռմ ինձ առաջարկել մեր Պօստյեղբարք — հետեւի նախնեաց տառադարձութեանը, որպէս զի մեր և իրանց գրածների մէջ միակերպութիւն լինի։



բարբառը: Ահա այս պատճառով ուղեղը դէն էք գոյում,  
սխալը վերջնում և այդ սխալովը ուրիշն ուղեղը չափում  
ու ստում:

Ծերունի Գաբրիէլ Պատկանեանցը այնքան զրակա-  
նական պարկեշտութիւն ունի, որ իւր մշտարիտ կարծիքը  
յայտնել է որպէս «Տարակոյս» (Տես ներկայ տարոյս «Ա-  
րարատ Ամառըրի մէջ, [Թիւ Գ.]): Այս յօդուածի մէջ ա-  
հա ինչ է առում մեր պատկառելի ծերունին, — «Տգիխիսի  
հնչիւնն պիտի համարուի աւելի մերձ այն հնչմանց, որ  
Մեսրոպ տուել է իւրահնար տառերուն թէ Հայոց և թէ  
Վրաց»: Ահաւասիկ ճշմարտութիւնը, որ երկար ժամանակ  
թաղցրած պահել է մեր Ափուն և 'ի վերջոյ յայտնում  
է այն էլ ոչ որպէս ճշմարտութիւն, այլ որպէս «Տարա-  
կոյս»: Սորա հակառակ մեր Սրբազանը իւր զրուածքը հարց  
ու պատասխանի տակ զնելով հաւատոյ դաւանարանու-  
թեան դասադրքի ձև է տուել նորան և ամենայն վտա-  
հութեամբ ասել 'ի պէտս Ազգային Վարժարանաց: Այլ բան  
է, եթէ որպէս մի կարծիք առաջարկէր, որպէս դատողու-  
թեան և մշակութեան կարօտ նիւթ: Ուրեմն միայն Պա-  
պը չէ, որ ինք զինքը անսխալ է համարում: Սրբազանը  
և ոչ մի խօսք չի ասել Վրաց հնչիւնների մասին, բայց  
չատ է խօսեցել այնպիսի հնչիւնների վերայ, որոնք ամե-  
նեկն Սրբաբառի անունը լսած չեն: Հեշար թողած դժուար-  
րի կռուիցն է ընկել:

Կարճ ասել.

Ծերունի Պատկանեանցը իրականութեան հետ մօտիկ  
ծանօթանալը հարկաւոր համարելով, չի ուղեցել, որպէս  
խոհական և փորձ սիրող մարդ, իւր վերջնական վճիռը  
տալ. բայց սորա հակառակ Սրբազանը հետեւել է այն ա-  
ռակին, որի մէջ պատմելում է, թէ ինչպէս մի Գերման

նացի փիլիսոփայ կեանքի մէջ ուղտ սեօած չը լինելով, այլ միայն անունը լսած, թէ աշխարհումս մի կենդանի կայ այդ անունով, ցանկանում է ուղտնկարագրել, մինչդեռ իւր ընկեր Անգղեացին այդ նպատակով գնում է Ս. փրիկէի և Արաբիայի անապատները առաջուց քսան տարի ժամանակ զննելով մաքումը ուղտեր ուսումնասիրելու համար: Գերմանացին փակվում է իւր սենեակի մէջ, ձեռքը ճակատին գնում, և սկսում մտածել, թէ արդեօք ինչպիսի կենդանի պէտքէ որ լինի ուղտը: Երևակայում է շատ և նկարագրում մի անհնթեթ հրէշ, և ժողովողին հաւատացնում, թէ սա է ուղտը, ուրիշ կերպ կարող չի լինիլ.....

Վ Ե Ր Զ:





Գինն է Ռուսաստան 25 կ. ա.

Թուրքիա . . 1 ֆրանկ





12 MAR 2013

1996





